

U/500 E. 100 E. 100

Plaza de la Presidencia

58
U-50

p/4/4 1913

20 JUL 2010

ՄԵՂՐԱՏՈՒ ԲՈՅՄԵՐ

Ա Ն Դ Ր Կ Ո Վ Կ Ա Ս ՈՒ Մ

Պատկերազարդւած



Կազմեց՝ Ն. ՍԻՄԵՆՆԱՆՅ

Խ Ե Յ Լ Ի Ս

Տպարան Հեղճեմ, Մոսկվայի պր. № 8
1913

Գինը է 30 Կ.

58
Ս-50

Ն. ՍԻՄԷՕՆԵԱՆ

Հրատարակած և լրիվները.

1. Ընդհանուր աշխարհագրություն

ա) Հայրենագրություն	20 է
բ) Մասն Բնական	60 »
գ) Մասն Բաղաբական	60 »

Սպառված են

2. Տնային բժշկական մարմնամարզություն, նկարներով.	40 »
3. Ձեռնարկ Գործնական Բանջարաբուծության նկար.	60 »
4. Համառոտ Ձեռնարկ Թռչնապահության՝ նկարներով.	25 »
5. Խոտաբուծություն (ըստ Կոտեճնիկովի և ուրիշների)	20 »
6. Թթենի, գործնական ձեռնարկ	25 »
7. Մեղրատու բոյսեր.	30 »

Անտիպ պատրաստ են.

1. Պտղատու և անտառային ծառերի տնկարան
2. Պտղատու պարտեզ (ըստ Մոսկվիչի)



ՄԵՂՐԱՏՈՒ ԲՈՅՍԵՐ

530
113-ՍԻ

Ա Ն Դ Դ Կ Ո Վ Կ Ա Ս ՈՒ Մ



Պատկերազարդված 65 նկարներով

Կազմեց՝ Ն. ՍԻՄԷՕՆԵԱՆ



Թ. Ի. Ֆ. Լ. Ի. Ս.
Տպարան «Հ. ՊՕԵԱՆ» Մոսկվայի պր. № 8
1913



Существуетъ

съ 1872 года

1-ое Кавказское
ДЕПО СѢМЯНЪ
Ларше

ПРЕДЛАГАЕТЪ НОВАГО УРОЖАЯ ИСПЫТАННЫЯ

СѢМЕНА

медоносныя, огородныя, цвѣточныя, древесныя, травяныя и друг.
лучшаго качества.

ՀԱՐՇԷ

ԿԱՎԿԱՅԱՆ ԵՌԱՋԱՆ ՊԱՀԵՍ ՍԵՐՄԵՐԻ,

որ գոյութիւն ունի 1872 թւից, վաճառում է ամեն տե-
սակ բանջարեղէնների, պտղաբմառների, խոտերի, ծաղիկ-
ների, ՄԵՂՐԱՏՈՒ ԲՈՅՍԵՐԻ, անտառային և պտղատու
ծառերի փորձուած, ընտիր և թարմ սերմեր:

Վաճառատունը ամեն տարի հրատարակում է իր ապ-
րանքի պատկերազարդ ցանկը, որը կուղարկուի ՁՐԻ ամեն
գիմադրին:

Հասցէն՝ Тифлисъ, Михайловскій проспектъ № 10. ЛАРШЕ.

ՍԵՐՄԵՐԻ (ՍԵՐՄԵՐԻ)

ԱՂԷՔՍԵՆԴՐԵԱՆ ՍԻՄԷՐՆԵՆՏԻՆ

ՆՈՒԻՐՈՒՄ Է ԿԱԶՄՈՂԸ

ՍԻՐԵԼԻ ՍԵՐԵՑԺԱ

Քեզ, որ զրաջան մեղուի նման գիտութեանց
ծաղիկները վրայ կ'ոստոստաս և քաղցր նեկտար կը
փնտրես նրանց միջից, նուիրում եմ ասա այս
աշխատութիւնս, որը ինքը մի նոյնպիսի հաւաքա-
ծու է եւրոպական փնտրող, հետազօտող մտքի ու
գիտութեան: Թող ամեն մի հայ մարդ, որ իւր
համեստ տնտեսութեան մէջ—պարտիզում, այգում
կամ դաշտում մի կամ մի քանի փեթակ դնի, թող
կարողանայ ուշադիր հայեացքով նայել իւր շուրջ
գտնուած բուսականութեանը, որի մէջ նա կը գտնի
այն բոլոր ծաղիկներն ու բոյսերը, որ այնպէս
հմուտ և խելացի կերպով փնտրում ու ընտրում
են նրա մեղուները և այդ անելիս թող յիշի քեզ,
որ առիթ և պատճառ դարձար այս աշխատութեա-
նըս լոյս ընծայելուն:

Քեզ սիրող հօրեղբայր՝

ՆԵՐՍԷՍ ՍԻՄԷՕՆԵԱՆՑ

ՄԻ ՓՈՔՐԻԿ ՆԱՅԵԱՅՔ.

Շատերը ենթադրում և մինչև անգամ համոզուած պնդում էին՝ թէ մեղուները ծաղիկներից ժողովում են պատրաստի մեղր. բայց այդ կարծիքը սխալ էր. ընտրեան մէջ պատրաստի մեղր չկայ, նա սաացւում է ծաղիկների մէջ ժողովուած հիւթից—նեկտարից, նոյնպէս և ծաղկափոշիներից, մեղրացողերից, ճեղքուած կամ վիրաւորուած հասած պտուղներից ծծուած անուշ հիւթերից, ծառերի բներից և կտրուած ոստերից արտաթորուած ջրերից և այլն, ու այս ամենը մեղուի ներքին գործարաններում—նեկտար-անօթներում կամ մեղրանօթներում առանձին գործողութեան (պրօցէսի) ենթարկւելով վերափոխւում ու դառնում է մեղր, որին մեղուն առանձին խնամքով լցնում է փեթակում նախօրօք իւր պատրաստած բըշիջների մէջ:

Քանի որ բոլոր, թէ ինքնաբոյս և թէ մշակող բոյսերը ունեն ծաղիկներ, հետևապէս նրանք ունին նաև քիչ թէ շատ քաղցրահիւթ նեկտար և ծաղկափոշի, որոնցից մեղուները կարողանում են օգտուել. բայց իսկական մեղրատու անունը առաւելապէս տալու է այն բոյսերին, որոնք ունին բաւականաչափ նեկտար կամ քաղցրաւուն ծաղկափոշի և թէ մեղուները հեշտ և առատութեամբ կարողանում են նրանցից իրենց մեղրապաշարը—բերքը ժողովել:

Բոյսերի այս առանձնայատկութիւնը պահպանելով եթէ խիստ ընտրութիւն անելու լինենք, այնու ամենայնիւ բնութեան մէջ իսկական մեղրատու բոյսերի թիւը,

նայելով տեղի դրութեան ու կլիմայական պայմաններին, կրգտնենք չափազանց մեծ ու բազմաթիւ (աւելի քան 1000) տեսակ. բայց մենք ծաղկաբաղ անելով դրանցից միայն գլխաւորների վրայ աւելի ուշք դարձրինք, այսինքն այնպիսիների, որոնց մեզ մօտ, Անդրկովկասում, գրեթէ ամեն մարդ ճանաչում է ու ամեն տեղ էլ նրանք աճում են ինքնաբոյս և կամ թէ մշակւում են:

Գրքոյկիս աղբիւրները: Այս համառօտ ժողովածուն կազմելիս առաջնորդուել ենք ըստ մեծի մասին Ա. Ֆ. Դէվրիէն-ի հրատարակած հանրագիտակ (Полная энциклопедія Рус. Сельско. хоз.) գրքերից, Ա. Խ. Բոլլով-ի „Дикорастущія растенія Кавказа“ աշխատասիրութիւնից, Հ. Ղ. Ալիշանի „Հայբուս“ Հ. Գ. Վ. Է. Մէնէ-վիշեանի «Բուսաբանութեան», Ա. Քիշմիշեանի և Յ. Աթա-նասեանի այդ բովանդակութեամբ աշխատասիրած գրքերից: Բոյսերի հայ և թուրք անունների իսկական կոչմանը ըստ մեծի մասին մեզ շատ նպաստեց Աւագ Սարուխանեանի մեծ աշխատութեամբ կազմած (դեռ ևս ձեռագիր) «Բուսաբանական բառարանը»:

Յիշուած բոյսերի ուսերէն և լատիներէն անունները ու մեծ մասի նկարները (բացառութեամբ մի քանի շատ ծանօթ ծառերի) դնելով՝ նպաստած կլինենք հետաքրքրւողներին հեշտութեամբ նրանց ճանաչել և գտնել: Ենթադրելով որ դրանց հայկական անունները եթէ շատերին ծանօթ չլինեն կամ եթէ գաւառական անունները շատ տեղ տարբեր են, նկարները կամ երկու լեզուներով անունները օգնութեան կը գան:

Գրքոյկիս ծաւալը չմեծացնելու համար չենք յիշած իրեն ժամանակին մեղուններին առատ բերք մատակարարող բուրաստանի ծաղիկներից, բանջարներից, համեմիքի բոյսերից, նոյնպէս և պարտիզի ու անտառային պտղատու ծառերից շատերը ու ագարակային բոյսերը, քանի որ

նրանք ընդհանուրին ծանօթ են. չենք յիշած նաև բուսա և քարաքսերը (Лишай, Lichen, Cetraria) և բազմատեղակ մամուռները (Мохъ, Sargassum bacciferum և S. Podacanthum), որոնք չեն մշակւում, այլ վայրի են և ինքնաբոյս:

Նախ քան բոյսերի անհատական նկարագրութիւնը անելու, յատկացրինք երկու հետաքրքիր բաժիններ՝ ա) Բերքի (մեղրապաշարի) և բ) Մեղրացողի մասին. իսկ գրքոյկի վերջումը դրինք ա) ուս և եւրոպական գրականութեան մէջ եղած մեղրատու բոյսերի և մեղրացողի մասին գիտական մի քանի գրութիւնների ցուցակը և մեր նկարագրած բոյսերի ցանկը՝ հայերէն, ուսերէն և լատիներէն անունով—իւրաքանչիւրը առանձին:

Ն. Ս.



ԿՈՂԿԵՍԵՆՆ ԸՌԻՋԻՆ ՄԵԳՈՒՐՈՒԹԵԿԵՆ ԸՐՀԵՍՏԵՆՈՅ

ԱԴՕԼՖ ԴԻԻՄԱՅԻ

Մեղուաբուծական բոլոր պարագաներ պատրաստելու համար
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԷԼԵԲՏՐԱՇԱՐԺ ՍԵՊՀԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ:

Արհեստական մայրերի բուծարան եւ պանեստ:

Արհեստական մոմաթերթ (չեչ), մեղր քամող (ցնարոֆուզ)
և կարևոր բոլոր գործիքներ (մոմահալ, գլան, մեքենայ և այլն):
Պատրաստի փեթակներ: Ձեռնարկներ և զործիքներ՝ արհեստա-
կան մայրեր պատրաստելու համար:

Մեղուաբուծութեան վերաբերեալ նորագոյն ԳՐԿԵՐ ԵՒ
ՁԵՌՆԱՐԿՆԵՐ:

Գնում և ծախում է մեղր (զտած, խորխաններով— շրջանակ-
ներում և կարծրացրած աղիւսներով), մեղրամոմ: Նորութիւն
է՝ կարծրացրած մեղրը, մեղրաքացախը եւ մեղրագինին:

Արհեստանոցի պատկերազարդ պրէյս-կուրանտը ձրիապէս
ուղարկում է ամեն ցանկացողին:

Դիմել՝ Тифлисъ, Михайл. пр. № 40 АДОЛЬФЪ ДЮМА.

ПЕРВОЕ

Кавказское пчеловодное заведение

АДОЛЬФА ДЮМА

Тифлисъ, Михайловскій пр., № 140.

Специальный складъ

НАТУРАЛЬНОГО

центробѣжнаго, сотоваго, секціоннаго

МЕДА.

НОВОСТЬ!!!

медъ въ плиткахъ, медовый уксусъ и медовое вино.

ПОКУШКА

ЧИСТАГО ПЧЕЛИНАГО ВОСК А

ՄԵԳՈՒՆԵՐԻ ՊՈՇԱՐԸ*)

Մեղուն իրեն պէտք եղած պաշարը ժողովում է իր բնակա-
րանի շուրջը գտնուող բույսերի ցեղատար—մեղրահիւթերից և ծաղ-
կափոշիներից. թէ մէկը և թէ միւսը մեղուի բնական անուններն
են. երկարատեւ և առատ պաշարանիւթերի գոյութիւնը մեղուա-
բուծութեան յաջողութեան և ապահով բերք ստանալու գլխաւոր
գրաւականներն են:

Բացի վերոյիշեալ երկու նիւթերից, մեղուի պաշար են
համարուում նաեւ մեղրախեփը և ջուրը:

Ծաղկափոշին, ինչպէս հասակաւոր մեղուների, նոյնպէս և
նրանց ձագերի աննդհան կարևոր նիւթերից մէկն է. նրա բաղա-
դրիչ մասերի մէջ կայ առատ սպիտակուց, որը լրացնում է մեղրի
միջի ազոտային մասի պակասը. իսկ յատուկ ձագերի համար նա
թէ կաթ է և թէ աննդարար խիւս:

Մեղուները ջուրը ժողովում են իրենց մարմնի մէջ եղած
մեղրաստամբքում և փեթակը հասցնելով իսկոյն նրան գործադ-
րում են:

Մեղուն երբէք ջրից զուրկ չէ մնում և ջրի ընտրութիւն չէ
անում. նա անխտիր օգտւում է ինչպէս լճերի, վճիտ աղբիւր-
ների և առուների մաքուր ջրերից, նոյնպէս և հոտած ձահիճներից
ու աղբանոցների հիւթերից և նշանաւորն այն է, որ վերջիննե-
րից փոխանակ գանելուց կամ զգւելուց, կարծես աւելի է գերա-
դասում, քան մաքուր—անարատ ջուրը:

Ջրի պաշարը անսպառ պահելու համար մեղապահները,
չնայելով որ իրենց մեղանոցները մօտ են լինում գնացական
ջրերին կամ լճերին, այնուամենայնիւ փեթակների միջանցքներում
տաշտերով լի ջուր են դնում. բայց նախազգուշութեան համար
ջրի երեսը բիշ յարդ կամ տերեւ են ձգում, որպէս զի մեղուները
ջուր խմելիս չխեղտուին:

*) Արտատպուած «Գիւղատնտես» 1911 № № 41, 42 և 43-ից. Ն Ս.

Իսկ թէ մեղունները ջուրը խմում են իսկապէս ծարմւր յագեցնելու—թէ ջուրը ընդունում են որպէսզի իրենց ներքին գործարաններում շարքաբայած մեղրը լուծուի—փափկի, որ կարողանան իրենց ձագերի համար սնունդ ու խիւս պատրաստել, այս հարցերը մինչև այժմ մոլթն են մնացել—դեռ ես չեմ պարզուել:

Սրանց վերաբերմամբ թեր և դէմ խօսողներէց մէկն էլ յայտնի մեղուաբոյժ Լանգստրօնն է. նա չի կարծում որ մեղունները ջուրը ընդունում են ծարմւր յագեցնելու համար:

Ջրի կարիքը մեղունները գլխաւորապէս դուրս են գարնանը և ամառը՝ ձագ տալու շրջաններում. իսկ ձմեռը նրանք ջրի կարիք ամենեւին չեն դուրս, այլ բաւականանում են մեղրում եղած ջրային մասից կամ թէ օդի մէջ եղած խոնաւութիւնից:

Մեղունները աւելի գերադասում են այն ջուրը, որը լի է լինում քիմիական աղերով—նշաղէր, բորակ և մոխիր (ամիակ, նատր և կալի):

Շատ անգամ մեղուաբոյժները մեղուանոցներում դնում են տաշտերով թոյլ աղաջուր, (մեղունները աղի սիրահար են), իսկ թէ աղը մեղուի ներքին գործարանների վերաբերմամբ լինի նշանակութիւն ունի, դեռ ես մասնագէտներից չեմ պարզեւծ:

Խեթը (ծծումբ և ակնամոմ, Ysa, Propolis) մեղունները ժողովում են բոյսերի, մանաւանդ լորենու ծառի կողմներից, որը վերը յիշած ծաղկափոշու գնդակների նման կլորեւծով դարսում են ետի ռոտների սրնքախոտոյններում, ու կրում են դէպի փեթակը:

Մեղուի համար չորրորդ և ամենագլխաւոր պաշարը ծաղկանեկտարն է:

Մեղուն գրեթէ ամեն տեղ կարող է գտնել ծաղկափոշի, ջուր և խէժ. բայց նրա ստանալիք պաշարի յատկութիւնը բացառապէս որոշւում է մեղուանոցին շրջապատող բուսականութեան ունեցած նեկտարի քանակովը ու որակովը:

Թէև մեղուն իւր պաշարի համար կարող է մեղուանոցից մինչև 5 վերստ հեռուները թռչել, սակայն նրա տէրը աշխատելու է, որ մեղրապաշարի գլխաւոր կենտրոնները մեղուանոցից 2—3 վերստից աւել հեռու չլինին. ապա թէ ոչ, մեղուն շատ ժամանակ, ոյժ և աշխատանք է կորցնում, երբ ստիպւած է լինում պաշարի համար անգաղար հեռուները գնալ ու գալ:

Մէկ ֆունտ մեղր շինելու համար մեղուն 7000 անգամ փեթակից դուրս է թռչում ու վերադառնում:

Մեղուն նեկտարը ժողովում է ծաղկաբաժակներից, ուր նա առաջանում է նեկտարային առանձին գեղձերի կազմուածքից:

Իւր կնճիթով մեղուն նեկտարն ու ջուրը ծծելով ժողովում է իր առաջին մեղրաստամոքսի մէջ, որի տրամագիծը լինում է $\frac{1}{9}$ բլթաչափ (դիւյլմ). սրան լցնելու համար մեղուն պէտք է մի քանի տամնեակ ծաղիկների այցելէ, որից յետոյ իւր պաշարով ծանրաբեռնւած (որի ծանրութիւնը հաւասար է իւր մարմնի $\frac{2}{3}$ ծանրութեանը) վերադառնում է իւր փեթակը ու այնտեղ դուրս է ցայտեցնում իւր բերած նեկտարը կամ թէ թափում է հէնց առաջին պատահած դատարկ բջիջի մէջ և կամ թէ բաժանում է փեթակի մէջ եղող մեղուններին ու ինքը դարձեալ թռչում է պաշար ժողովելու:

Մի ծաղկից միւսը թռչկոտելով միևնոյն փեթակի մեղուն կամ մեղունները աշխատում են իրենց պաշարը ժողովել միևնոյն տեսակ ծաղիկներից, այնպէս որ մի օրում ժողոված մեղրը լինում է միանման համի, հոտի և որակի:

Ամեն մի բոյս տալիս է տարբեր որակի մեղր. ամենալաւ մեղրը համարւում է լորենու, կորնգանի և խնձորենու ծաղիկներից ժողովածը: Հնդկացորենի ծաղկից ստացած մեղրը թրխագոյն է, ունի բաւական սուր հոտ և անդուր համ: Լաւ է նոյնպէս սպիտակ ակացու և սպիտակ երեքնուկի մեղրը:

Ծաղկաբաժակում ամենաշատ նեկտար ժողովւում է այն ժամանակ, երբ ծաղկի սեռական գործարանները սկսում են հատունանալ. սակայն նեկտարի քանակը կարող է փոխել օրւայ եղանակի տարբերութեան և օդի խոնաւութեան հետ. նա պակասում է երաշտ եղանակին և շատանում է՝ անձրեկից յետոյ: Առաւօտները և երեկոյեանները ծաղկանեկտարը աւելի շատ է լինում, քան թէ ցերեկները:

Տաք և խոնաւ օրում ուժեղ ընտանիքը կարող է ժողովել մինչև 10 ֆունտ մեղր, մինչդեռ ցուրտ և քամոտ եղանակում նոյն ընտանիքը հազիւ թէ միայն վաղ առաւօտները կարողանայ մի քիչ պաշար գտնել:

Նեկտարը միշտ բաւականաչափ ջուր ունի—միջին թւով 60—80 %:

Անձրեկից յետոյ, կամ առ հասարակ խոնաւ եղանակին, նեկտարի քանակը աւելանալով շատանում է նաեւ նրա ջրի քանակը:

Մեղրը բլիշների մէջ լցնուելուց յետոյ, մեղունների ջանքով, օդի առատ հոսանքը փեթակի մէջ մտնելով ջրային մասերը արագապէս գոլորշիացնում ու մեղրը ցամաքացնում է:

Մեղուապահութիւնը յաջող է լինում այն դէպքում, երբ ապահովուած են լինում մեղունները պաշարի կողմից, այն է՝ ունին իրենց կարիքի համար բաւականաչափ նեկտարատու և ծաղկափոշիատու բոյսեր. ուստի մեղուանոց կազմելիս անհրաժեշտ է լուրջ ուշադրութիւն դարձնել, որպէսզի որքան կարելի է, նա լինի մեղրատու առատ բոյսերի շրջանում:

Թէ և դեռ ևս պարզապէս չեն որոշւած մի ընտանիքի մէջ եղած մեղունների թւի և մեղրատու բոյսերի քանակի յարաբերութիւնները, սակայն իմանալով զանազան բոյսերի մեղրատուութեան համեմատական չափերը և նրանց ծաղկելու ժամանակները, նոյնպէս և ուսումնասիրելով մի մեղուանոցի շուրջը գտնուող բուսականութիւնը, կարելի է մօտաւորապէս գուշակել մեղուապահութեամբ պարագելու հետեանքը:

Լ. Ա. Պօտէլսինի—կարծիքով, պէտք է աչքի առաջ ունենալ՝ բացի պաշարալի (բերքատու) բոյսերի բռնած տարածութիւնը, նաև նրանց տեսակները, նրանց շարունակ կամ պարբերաբար ծաղկելու տեւողութեան շրջանը, նաև այն, թէ պաշարատու որ բոյսը մանրածաղիկ է և որը մեծածաղիկ: Մանրածաղիկները գերազանցելի են, որովհետև մեղունները աւելի հեշտութեամբ են կարողանում նրանց միջի նեկտարին հասնել ու ժողովել, քան թէ մեծածաղիկները. բացի այդ, մանրածաղիկները առհասարակ որոշ ժամանակներում ընդունակ են շատ նեկտար արտադրել, քան թէ խոշորածաղիկները:

Մեղուանոցին շրջապատող տեղի դիրքը, անտառների, մարգագետինների, արօտատեղերի, արտերի, այգիների, պարտէզների, բանջարանոցների մերձակայութիւնը կամ հեռաւորութիւնը մեծ կապ ունին մեղուի պաշարի շատ կամ քիչ, շարունակ կամ կարճատեւ լինելու հետ. ծառերն ու թուփերն վաղ գարնանից են մեղրապաշար մատակարարում, մարգագետինները՝ մինչև խոտհաքքի վերջը, արտերը՝ տեղ-տեղ աւելի երկարատեւ և այլն:

Ի հարկէ, բուսականութեան այդպիսի դասաւորութիւնը անհամեմատ աւելի ձեռնառու և օգտակար է քան թէ միատեսակ և կարճատեւ լինելուց, թէկուզ առատ լինի նա պաշարով, որովհետև կարճատեւ, բայց պաշարալի, շրջանում կարող է պատահել

երբեմն եղանակի մի այնպիսի անակնկալ դէպք, որից և մեղունները իսպառ զրկւած մնան պաշարից:

Անհամեմատ օգտաւէտ է, երբ պտղատու բոյսերի ծաղկելու շրջանները որոշ ժամանակամիջոցներով իրարից ընդհատուած լինեն. որովհետև մեղունները միջոց կունենան բլիշների միջի ջրի աւելորդ մասերը գոլորշիացնելու—մեղրը ցամաքացնելու, նոյնպէս և ձագերին կարգին խնամելու և կերակրելու:

Անտառի մերձակայութիւնը լաւ է ոչ միայն նրանով որ մեղունները կարողանան ծառերից առատ պաշար ժողովել, այլ և նրա համար, որ անտառի միջի բաց տեղերում, ուր խոտը ոչ հարուած է և ոչ արածացնում, այլ անարատ և անձեռնմխելի է մնում, մեղունները ամբողջ ամառը և դեռ էլ աւելի ուշ, կարող են գտնել ծաղկալի բոյսեր. բացի այդ, յայտնի է որ անտառը իւր շուրջը եղած օդը միշտ թաց պահելով և չորացնող բամբակների առաջը բռնելով, նպաստում է իւր մերձակայքում գտնուող մարգագետինների և արօտատեղերի բուսականութեանը մնալ շարունակ կանաչ, փարթամ, ծաղկալի և նեկտարաշատ:

Մեղուաբոյժ Ա. Պօպովը, իւր կատարած դիտողութիւնների վրայ հիմնւած, եզրակացնում է՝ որ անտառապատ տեղերում տարւայ զանազան ժամանակներում ամենալաւ մեղրապաշար տալիս են հետեւեալ բոյսերը, ցուրտ երկիրներում, վաղ գարնանը, ամենաշուտ բացւում են՝ օւռնեցիներ (փշի-փշի). սրանց զանազան տեսակները յաջորդաբար ծաղկում են գրեթէ մի ամիս շարունակ. ուռնու հետ համարեա միաժամանակ ծաղկում է ընտանի կաղնու (Ֆնտուղի) ծառը, իսկ աւելի տաք շրջաններում ամենավաղ ծաղկում է հոնք—(զողալ): Ֆնտուղից յետոյ գալիս է թղկին, սա մի շաբաթ շարունակ առատ պաշար է մատակարարում մեղուններին. դրանից քիչ յետոյ, իրար հետից, սկսում են բացւել ու ծաղկել անտառային միւս ծառերը. երբ մեղունները արդէն բաւականաչափ կշտացած են լինում վաղ ծաղկած ծառերի տւած բերքից, այնուհետև նրանք էլ այնքան ուշը չեն դառնում կեճու և սրա նման ուրիշ ծառերի ուշամնաց ծաղիկներին:

Կէճու տուած մեղրապաշարը շատ օգտաւէտ է մեղուններին: Խոտերի ծաղիկներից, վաղ գարնանը, պէտք են գալիս աւելի փամբուղայ (Одыбанчикъ. Leontodon Taraxacum), խոպուղը, ձնծաղիկը, քան թէ մանուշակը, հովտաշուշանը, անմուռուկը: Ծաղիկներից օգտւելը տեւում է մինչև պտղածառերի ծաղկելու շրջանը. նախ՝ ծաղկում են բալնին, կեռանը, վայրի

տանձը, խնձորը, սալորը, և այլն: Սրանցից յետոյ արդէն իրաբետեից սկսում են ծաղկել պարտիզի պողատունները (տաք տեղերում նշենին ամենից շուտ է ծաղկում): Թէև յետոյ ծաղկող թէ ծառերը և թէ հացաբոյսերը արդէն այնքան զբաւիչ չեն լինում մեղուներին, սակայն դեղին ակացու ծաղիկը շատ մեղրատու և անուշաբոյր է. նա ծաղկելիս մեղուն չէ կարողանում անտարբեր մնալ, մեղուանոցումն էլ մի առանձին աշխոյժ, ոգևորութիւն և զրգումունք է տեղի ունենում. բոլոր մեղրաբոյժերը սրա թուփը համարում են շատ օգտաւէտ մեղրատու բոյս ու ոմանք աշխատում են մեղուանոցի շուրջը եղող կանաչ ցանկապատը անպատճառ դեղին ակացիայից շինել:

Մոտերից վերջը ծաղկում են՝ բոնչին և մասրին (վայրի վարդենին) ու զրանով վերջանում է ծառատառ. մեղրապաշարի առաջին շրջանը:

Անտառագիւղի տեղերում մեղուները օգտւում են պարտիզի և այգիների ծառերի և թուփերի ծաղիկներից ու ստիպւած են նրանք թափառել մի տեղից միւսը ու այս շարունակում է այնքան ժամանակ, մինչև որ դաշտերի խոտերը կանաչեն, ու նրանով սկսւում է դաշտային երկրորդ շրջանը, որը թէև շատ առատ ու շահաւէտ է, սակայն ամիսոս որ կարճատե է—տևում է մինչև խոտահարքը:

Անտառային ամենաուշ ծաղկող ծառը լորենին է. մեղուները ազահաբար թափւում են սրա ծաղիկները վրայ ու այնքան առատ պաշար են ժողովում, որ նրանց անուշաբոյր հոտը անցնում է փեթակում առաջուց ժողոված մեղրին էլ: Լորենուց յետոյ ծաղկում է արդէն աճարի ցանքսը. սա թէ և նեկտարաշատ է, բայց ամենաուշ ծաղկող հացաբոյսն է. սրանով էլ վերջանում է մեղրի գլխաւոր պաշարառութիւնը, որը ընկնում է յուլիսի 15-ի մօտերը, մինչ այդ ժամանակամիջոցը մեղուները արդէն մեղրով լցրած են լինում իրենց փեթակները ու այնուհետև բաւականանում են վայրի խոտերի ու շաքարեղէնի ծաղիկներից ծաղկաքաղ անելով: Յուրտ տեղերում, այդ իսկ միջոցներին, ծաղկում են արևածաղիկը, աշնան համար ցանւած վարունգը և մօշէ. սրանք թէ և երկրորդական մեղրատուներ են, բայց անճարացած դէպքում երբեմն վայրի բողկի, խուլ եղինջի, մանանեխի, վայրի անանուխի և այլն ծաղիկներից ժողոված պաշարը օգնում է ուշամնաց ընտանիքին ձագ տալուն և նրանց խնամելուն. ուրեմն իր ժամանակին անկատար մնացած ընտա-

նիքը, որ չի կարողացել բաւականաչափ օգտուել մարգագետիններից, լորենուց և աճարի արտերից, կարող է նրանցով իւր պակասը մասամբ լրացնել:

Բայց սրանց թոյլ օգնութեանը կարօտ չմնալու համար աշխատելու է, որ առաջին պաշարառութիւնը անցնի լաւ, լինի զօրաւոր և հէնց այն շրջանումն էլ ձագ տալը աւարտուի:

Բուսական հարստութիւնից մեղուներին լաւ պաշար են տալիս 1) ծառերից՝ բացի անտառային և պողատու ծառերից և նախընթաց գլխում յիշածներից, լաւ են նոյնպէս ջրակաղնին, հացենին, վայրի շագանակենին, խոզակաղնենին և սոսին. սրանք լաւ են իբրև ծաղկափողներ տուղներ. բացի վայրի շագանակենուց, որը առատօրէն տալիս է թէ ծաղկափողի, թէ նեկտար և թէ խէժ. խէժը թէև ստացւում է նաև սոսուց, եղևուց և փիճից: 2) Թուփերից՝ մոշին, մօրին, կծոխուրը, յասմիկը, դժնիկենին անձխոտ, տալիս են շատ նեկտար և ծաղկափողի. սրանք գրեթէ բոլորն էլ ծաղկում են հետզհետէ մինչև յունիս, իսկ մոշին՝ օգոստոսին էլ ծաղիկ է ունենում: Ազնիւ մօրին (մալինէն) և մոշին տալիս են հիանալի մեղր. նրանց ծաղկաբաժակները քանի որ ցած—դէպի գետին են դարձրած, պաշտպանւած են անձրևների ողողելուց: 3) Մոտաբոյսերից՝ ի միջի այլոց, լաւ մեղրատուներ են՝ գոճմակը, մեղրածծուկը և այլն և այլն, թւով աւելի քան 500 խոտեր, որոնք յաջորդաբար ծաղկում են մինչև սեպտեմբեր և ոմանք էլ աւելի. իսկ մայիսից մինչև յուլիս ցանովի խոտերից՝ երբեքուհները, առույտը, կորնգանը, վիկը, շաբարը լիպիկը և յունական առույտը (շամբալան) թէ և շատ լաւ մեղրատուներ են, բայց նրանք այն ժամանակն են միայն մատչելի, երբ նրանց ծաղկաբաժակները լիով լցւում են նեկտարով: 4) Բուրաստանի բոլոր ծաղիկները և 5) բանջարանոցի և ագարակի բոյսերի ծաղիկները:

Կան բոյսեր, որոնց ծաղիկները շարունակ մնում են թուփի վրայ մինչև ցրտերի ընկնելը և գետնի սառչիլը, օրինակ՝ ցախին: Եւրոպայի շատ տեղերում ընդունւած է այս բոյսը իբրև լաւ մեղրատու, բայց նրանից ստացւած մեղրը որակով վատ է:

Չնայելով որ անթիւ տեսակ մեղրատու բոյսեր կան, այնուամենայնիւ չի կարելի ամեն պատահած տեղում բազմաթիւ փեթակներով մեղանոցներ սարգել ու մեծ շահ սպասել:

Օրինակ՝ եթէ մի շրջանի դաշտերի մեծ մասը հերկուի կամ անտառներն կտրատուին, այդպիսի տեղերի մօտ եղած մեղուանոցի մեղուները զուրկ կմնան առատ պաշար ժողովելուց, մանաւանդ երբ մեղուանոցի մօտերքում չլինեն գոնեա երեքնուկի, առւոյտի, կորնգանի, շաբդարի, վիկի և կամ յոնական առւոյտի արտեր. այդպիսի դէպքում անհրաժեշտ է մեղուանոցի մօտերքումը անպատճառ ցանել և օճեցնել բացի վերել յիշած մեղրատու խոտաբոյսերը, նաեւ սպիտակ և շեղական երեքնուկ և սպիտակ մանանեխ. սրանք ամենքը մի և նոյն ժամանակ էլ տնտեսութեան համար մեծ նշանակութիւն ունեցողներ են՝ իբրեւ ընտանի անասունների լաւ կեր.



Ն կ ա Ր № 1.

Բարձրի մեղուն ծաղկից բերք է ստանում, իսկ ցածի մեղուն բեղմնաւորում է կնիքը.


Մեղուները պաշար ժողովելու համար ծաղկից ծաղիկ անցնելով, մի և նոյն ժամանակ օգնում են բոյսերի բեղմնաւորութեանը — ասնում են միևնոյն տեսակի արական ծաղկափառին և թափում են նոյն տեսակ բոյսի ծաղկի իգական առէչքները վրայ. (Նկ. № 1). այսպիսով այս զրաշան միջատները, թէ բոյսերն են բեղմնաւորացնում

և թէ մարդկանց տնտեսութեանը մեծ աջակցութիւն են ցոյց տալիս. գոնեա հէնց այս տեսակէտից միայն ցանկալի է, որ մեղուապահութիւնը լայն ծաւալով տարածուի:

Ծաղկանեկտարը եզակի նիւթ չէ, որից մեղուները մեղր են արտադրում. նրանք օգտւում են նմանապէս բնական և արհեստական այն ամեն նիւթերից, որոնց մէջ փոքր ի շատէ քաղցրութիւն — շաքար կայ:

Շատերն են տեսել և տեսնում թէ մեղուները ինչպիսի աշխոյժով այցելում են շաքարի ֆարրիկաները և քաղցաւենեաց գործարանները ու աղահարար ծծում են ինչպէս պատրաստի ապրանքը, նոյնպէս էլ նրանցից դուրս ձգւած տականքը: Նմանապէս նրանք յօժարութեամբ ծծում են ուրիշ կենդանիների և միջատների կծած ու փշացրած տեղերից պտուղների հիւթը, բայց իրենք, մեղուները, առանձնապէս պտուղներ զրեթէ չեն փշացնում: Եւ վերջապէս այս անյադ միջատները ժողովում են կաղնենու, հացենու, կէճու, կծոխուրի, դեղձենու, ուռենու և էլի ուրիշ շատ ծառերի վրայ երևացող մեղրացողները:

Մի տեղում յաջող մեղուանոց սարգելու համար, ինչպէս վերևում յիշեցինք, պէտք է լաւ ուսումնասիրել ընդհանրապէս՝ տեղային մեղրապաշարի ներկայութիւնը և մասնաւորապէս՝ մեղրատու բոյսերի դրութիւնը, յատկութիւնը և քանակը և երբ սրանք ամենքը համապատասխան կլինեն ձեռնարկութեան պահանջներին, մեղուանոցը համարձակապէս կարելի է կազմել. և այն ժամանակ միայն մեղուապահը կարող է վստահ լինել, որ իւր մեղուանոցի բերքը ապահովուած է և ինքը կունենայ նրանցից ամեն տարի անսպառ. ու լաւ արդիւնք:



ՊՏՂԱՏԲՈՒԾԱԿԱՆ ՏՆԿԱՐԱՆ

ԵՂԲ. ԱՒԱՐԳՍԵՆՆԵՐԻ

Ծախուում են ինչպէս արտասահմանեան, նոյնպէս և Ռուսաստանի ու տեղական ամենաընտիր պտղատու ծառերի և հատապտուղների տնկիներ:

ԾԱՌԵՐԸ ՊԱՏՈՒԱՍՏՈՒԱԾ ԵՆ

Կան ԴԵՅՕՐԱՏԻԻ (զարդի համար), նոյնպէս և մշտադալար տնկիներ:

Գները շատ չափաւոր, պատւէրները կատարուում են ճշտութեամբ, շուտ և մեծ հոգացողութեամբ:

Մանրամասն պրէյս-կուրանտը կուղարկւի ՁՐԻ ամեն զիմովին.

Հասցէն՝ Ст. СКРА. (З. Ж. Д.) Тифл. гвб. Гор. у.

Садовое заведение БР. АВСАРКИСОВЫХЪ

Մ Ե Ղ Ր Ա Յ Ո Ղ*)

Մակարոյժ միջատներից մի քանիսը, մասնաւանդ լուիճները (Aphideae), առհասարակ ապրում են զանազան խոտերի և ծառերի տերեւների տակի երեսների վրայ ու մնում են նրանց հիւթերով. սրանց հեղուկային արտաթորութիւնները թափանցիկ են ու քաղցրահամ կաթիլներով թափւում են իրենցից ցած եղող տերեւների երեսների վրայ ու հետզհետէ ցամաքելով թանձրանում—ազոտ շաքարազոյն են ստանում: Այդ կաթիլները շատ նման են ցողի կաթիլներին, դրա համար էլ նրանց անուանում ենք մեղրացող:

Մեղրացողը մեր նախնիքներին էլ ծանօթ էր. նրանք սրա կազմուելու պատճառը չիմանալով, նրան վերագրում էին թէ մի երկնառաք տուրք—հրաշք է. սակայն այդ ենթադրութիւնում համոզուած ու կաշկանդուած չմնաց մարդը, այլ, բաղմակողմանի հետազոտութիւններով իսկութիւնը պարզաբանեց:

Մեղրացողի գոյանալը երկու իրարից տարբեր պատճառներից է առաջանում: (ըստ ոմանց երբորդն էլ հաճարի քօձէ) վրայ երկացող մեղրացողն է, որ առաջանում է կենսութիւն ունեցող մի տեսակ սնկամակարոյժների փոշիասերմերից). մեկը՝ այն քաղցր հիւթն է, որ երբեմն, կլիմայական դանազան պայմաններից երևում է մի քանի ծառերի տերեւների վրայ և երկրորդը՝ այն քաղցրահամ հիւթն է, որը արտաթորում են իրենցից մի քանի տեսակ լուիճներ՝ իրենց ողնաշարերի երկու կողմերում եղած ծակոտիներից. քանի որ մրջիւնները սիրահար են առհասարակ ամեն քաղցրահամ նիւթերին, ուստի և նրանք կանոնաւոր ու ազահարար յարձակւում են այս լուիճների վրայ, խողտացնելով նրանց, դուրս են թորել տալիս նրանց խողովակների միջի քաղցր հիւթը. իսկ երբ չկան մրջիւններ, լուիճները իրենցից դուրս են թորում խողովակներում կուտակուած աւելորդ հիւթը՝ ցայտեցնելով նրան բաւական հեռու, շրջապատող բոյսերի վրայ:

*) Բաղուած՝ Դեկրէնի հրատարակած «Հանրագիտակից»: Ն. Ս.

Տարի է լինում որ այդ մեղրացողը առատ է լինում, որով և այն տարին էլ մեղուների պաշարը—բերքը, աւելի նպաստաւոր է դառնում:

Լուիճներից արտաթորուած մեղրացողը բաւական առատ է լինում. դիտած են՝ որ 16 լուիճներ, որոնք ապրելիս են եղել թղկենու (*Елени, Acer platanoides*) ծառի տերևների վրայ, 24 ժամում դուրս են տուել 1,440 կաթիլ մեղրացող:

Այդ մեղրացողի բաղադրիչ զլխաւոր մասերն են՝ եղեգնաշաքար և ուրիշ շաքարեղէն՝ մինչև, 75%, իսկ մնացեալը—դեկտարին, մուցիլ, խեժ, սպիտակուցի հետքեր և մի քանի տեսակ աղեր:

Բոյսերի վերաբերմամբ մեղրացողի գոյութիւնը ունի իւր լաւ և վատ կողմերը:

Լաւը այն է՝ որ մրջիւնների մի քանի տեսակները առանձին հաճոյք են գգում մնել մեղրացողի հիւթովն, նրանք բարձրանալով ծառի վրայ, փնտրում—գտնում են լուիճները, իրենց կովերը, ու կերակրում են նրանց անուշահամ արտաթորութիւնով, զրահեա միասին և իսպառ հալածում են ծառի վրայ եղող ուրիշ վնասատու միջատներին մղելով նրանց դէմ կատաղի կոխ:

Շատ հետաքրքիր է տեսնել այդ կուրը, որը վարում են մրջիւնները համայնական ոյժով. մրջիւնները երբ նկատում են իրենց սննդատու լուիճներին սպառնացող վտանգը, այն է՝ երբ տեսնում են որ իշաճանճերը, կրէտները և սրանց նման միջատները ուզում են յարձակուել այդ լուիճների վրայ, անխտիր, բոլոր ներկայ եղող մրջիւնները, ետի ոտների վրայ ծառս են ելնում, իրենց թռչնաւոր մրջնաթթւոտով լի կնճիթները վեր ցցելով պատրաստուած են խայթելու սպանել չարամիտ յափըշտակչին, վերջիններս էլ լաւ իմանալով այդ դիմադրութեան ոյժը և իրենց համար գալիք վատ հետեանքը, շատ տղզալուց—բզգալուց յետոյ ձեռնուռնայն հեռանում են:

Վատը՝ որ առաջանում է մեղրացողից, շատ մեծ է. որովհետեւ այդ հեղուկը իւր բաղադրեալ նիւթերի շնորհիւ շատ լաւ մընդանիւթ է մի քանի մակաբոյժ սունկերի համար: Յաճախ պատահել է մեկ տեսնել որ ուռնու, խնձորենու, տանձենու, վարդենու, վաղի, սալորենիների և այլն ծառերի ու բոյսերի տերևների վերի երեսները եթէ միապաղաղ ծածկուած լինեն մեղրացողի անուշ հիւթով, նշանակում է հէնց նրանց վրան էլ եկել—բնակուել են *Capnodium* ասուած սունկերը, որից բոյսի բոլոր

տերևները ծածկուած են սև մուրի նման մի բարակ շերտով. հէնց սրանք են բուսականութիւնը փչացնող այն անթիւ ու անհամար մակաբոյժ սունկերը:

Թէ և այդ սունկերը մնում են միայն տերևների վրայ եղած մեղրացողով և ոչ թէ տերևների հիւթով, բայց այնու ամենայնիւ նրանք շատ են վնասում տերևներին, հետեաբար և՛ ամբողջ ծառին նրանով, որ անկային հաստ շերտը ծածկում է տերևների ծակոտիկը (բոյսի շնչառութեան գործարանները), որով բոլորովին արգելում է նրանց օդառել արևի և օդի ազդեցութիւններից—գաղարում է ամխաթթուատի լուծուածքի տեղի ունենալը—պրօցիսը:

Իսկ *Botrytis cinerea* սունկը վարակում է շատ բոյսերին. նախ՝ նա մանում է մեղրացողի կաթիլների մէջ, սրանից շուտով երևում են տերևների վրայ մութ կանաչ թաշանման թեփուկներ, որից յետոյ արդէն սկսում է վնասել բոյսի տերևներին, ցողունին, ծաղիկներին ու աստիճանաբար նրանց փչացնելով սպանում—չորացնում է բոյսին:

Septoria mori սունկը, այն որը հիւանդացնում է թթենիներին, նոյնպէս սկսում է նրանից, որ այդ մակաբոյժը նախ՝ մտնում է մեղրացողի կաթիլների մէջ և յետոյ՝ այնտեղից անցնում է ծառին ու վնասում նրան:

Ուրեմն բոյսերին մեղրացողի հասցրած վնասը այնքան մեծ է, որ պէտք է լուրջ վերաբերուել այս հարցին. հարկաւոր է այդ լուիճների դէմ կանոնաւոր կոխ մղել, արմատախիլ անել ու ազատել ծառի տերևները նրանց արտաթորութիւնից օժուելուց: Այս ցաւի դէմ առնելու համար պէտք է տերևները սրսկել սապոնի լուծուածքով կամ ծխախոտի էքստրատով:

Մեղրացողի առաջանալու պատճառը մի ուրիշ հետազօտութեամբ հետեւալն է. տաք եղանակին, մեծ անձրևներից յետոյ, երբ օդի մէջ լինում է շատ թացութիւն, բուսական հիւսուածքներից գոլորշիացող ջուրը պաղելով կաթիլանման նստում է բոյսի տերևների և նրա բնքոյշ մասերի վրայ. այդ իսկ գոլորշին իւր հետ դուրս է բերում մի որոշ բոյսերի մէջ եղած շաքարի մի մասը՝ հետեաբար մեղրացողը երևում է մի քանի բոյսերի այն մասերի վրայ, որոնք հարուստ են լինում շաքարով:

Մեղրացողի մէջ պարունակող մանանայի և շաքարային հիւթերը, նոյնպէս և նեկտարը, մեղուները ժողովում են հացի-նու, եղրեանու, լորենու, սին վայրի, բարդու, ուռնու, կաղնեանու,

կէճի, հաղարջի, կծոխորի, թղկենու, թեղու, բալենու և այլ ևս ուրիշ պտղատու ծառերի տերեւներից և ոստերից: Այդպիսի շաքարահիւթ լինում է նաև խոտաբոյսերի վրայ էլ ինչպէս՝ աճառի, վիկի, ցորենի, երբեմն էլ պատահում է նաև եղեգնի վրայ:

Շաքարահիւթը նշմարւում է ամառը, առաւելապէս յունիսին—յուլիսին. գրանից տերեւները վայլում են ափսոս, ինչպէս թէ սոսինձ է քսած երեսին. մեղրացողը քաղցրահամ է, իսկ եթէ ձեռքով շոշափենք՝ մածուցիկ է ու բաղկացած է շատ մանր ու թափանցիկ գնդակներից:

Այս հիւթից արտադրւած մեղրը լինում է ջրալի ու շուտ չի հասունանում—նա մեղուներին ափսոսն օգտաւէտ չէ, որքան լինում է ծաղիկներից ժողոված սովորական մեղրը. որակով մանաւանդ շատ ստոր է լինում աշնան վերջերին եղևնու և գինու ծառերի տերեւների վրայ գոյացող մեղրացողից ժողովածը. այսպիսի մեղրանիւթից մեղուները առհասարակ թուլանում, ստամոքսային ցաւ են ստանում ու ձմեռանը կոտորւում են:

Մեղուները ժողովում են նոյնպէս մի ուրիշ տեսակ մեղրացող՝ կաղնենու, թղկու, բելի, հացենու և այլն. ծառերի և մի քանի տեսակ խոտերի վրայ ապրող լուխճների արտաթորած՝ շաքարահիւթերից. բայց սրանցից շինած մեղրը թխազոյն է և նոյնպէս լաւ որակի չէ լինում. իրենք մեղուները այս լաւ իմանալով, միշտ գերադասում են օգտուել խոտաբոյսերի մեղրացողից:

ՄԵՂՐԱՏՈՒ ԲՈՅՍԵՐ

ԱԿԱՅԻԱ ԴԵՂԻՆ

Ակացիա-դեղին (Сибирская или Желтая акция или Гороховое дерево, Caragana arborescens): Այս ծառը պատկանում է ամեն տեղ գտնուող լորիածաղիկ սպիտակ ակացիայի ցեղին: *)

Սա Սիբիրի յատուկ ծառաթուփերից մէկն է. բարձրութիւնը հասնում է երբեմն 2¹/₂ սաժէնի. կեղևը փշալի է. զուգաշար (1¹/₂—2 վերջոյ երկայնութեան) տերեւները լինում են 8—10 հատ: Ծաղիկները դեղնազոյն ու քնքոյշ են. նրանք առատ են անուշաբոյր նեկտարով, որոնք մեղուներին աւելի մատչելի են, քան թէ սպիտակ ակացիայի կարծրաթերթ ծաղիկները:

Այս ծառը ցրտի դիմացկոտ է, սիրում է փափուկ հող:

Դեղին ակացիայի ծաղիկները շատ են նպաստում մեղուների ձագ տալուն. այդ իսկ պատճառով մեղուանոցների և պարտէզների շուրջը շատ օգտաւէտ է տնկել դրան՝ 2—3 շարքով. մէկ՝ իբրև լաւմեղրատու բոյս և երկրորդ՝ իբրև կանաչ ցանկապատ. միայն այս վերջինիս նպատակով եղած տնկիքը պէտք է հողի երեսից 3—4 վերջոյ բարձր կտրել, որպէս չի բնիցը դուրս գան բազմաթիւ ոստեր:

Դեղին ակացիան կարելի է բազմացնել կամ սերմը ցանելով կամ թէ դրա չոփերը վաղ գարնանը տնկելով:

*) Տե՛ս «Գիւղատնտես» 1911 թ. № 18. Էր. 277.

ԱԿԱՑԻԱ ՍՊԻՏԱԿ

Ակացիա սպիտակ ակակիա կամ փուշկեղև (Белая акация, (Robinia Pseudoacacia): Սա թէ և կովկասի բնիկ ծառերիցը է, բայց Ռուսը կովկաս գալուց յետոյ շատ է տարածուած. սրտ ծաղկից ստացուած մեղրը լինում է սպիտակ, շաքարաշատ, անուշաբոյր ու մանրահատիկ. երբ քիչ ցամաքում կամ ցրտից սառում է, ձեան նման սպիտակում է. չնայելով սրան, ակացիայի ծաղկից ստացած նեկտարի մեղրը ամենալաւ տեսակներից մէկն է, ու խորհուրդ է տրուում մեղուանոցների շուրջը տնկել սպիտակ ակացիա կամ թէ այդու կամ պարտիզի ցանկապատի փոխարէն



Նկ. № 2

Աղբաղբուկ

այս ծառերից տնկուտն խիտ՝ 2—3 կարգով. սրանք 3—4 տարեց յետոյ կը գոյացնեն անանցնելի փշոտ, կանաչ և զեղատեսիլ ցանկ, իսկ ծաղկած ժամանակը մեղուների համար անուշաղի առատ շտեմարան:

Ցանկապատի համար տնկուած ծառերի զլուխները 2—3 տարին մի անգամ պէտք է խուզել, որպէս զի բնի կողքերից ստատ ոստեր արձակելով ցանկապատը հետզհետ, խտանայ:

ԱՂԲԱՂԲՈՒԿ

Աղբաղբուկ կամ կատուախոտ (Valeriana, Мауиѣ, Valeriana officinalis): Այս անունով շատ բոյսեր են կոչուում, որոնց ընդհանուր յատկութիւնները իրար շատ նման են: Սրանք կամ խոտ են և կամ թէ թուփ. տերեւները փետրձև ու բաժանուած, իսկ ծաղիկները՝

հովանաձև կամ ձագարաձև. կարմրա—ճերմակ ծաղկապսակը 5 ճեղքերով՝ եզերը ունի, 3 փոշանօթ, իսկ հունդը փետրապսակով զարդարուած է: Բուսնում են սրանք անտառների եզերքներին, սարերի լանջերին և ջրալի արտերում. (Նկ. № 2): Վալերիանի հոտաւէտ արմատը շատ տեսակ դեղերի մէջ է գործածուում՝ դըլ-

խաւորապէս ջրերի հանդարտութեան համար, սա լաւ է նաև իրրե բրտնաբեր: Ծաղկում է յունիսից—օգոստոս: Լաւ մեղրատու է:


ԱՂԲԱՂԲՈՒԿ ՄԱՆՐ

Աղբաղբուկ մանր, Սիմսիմուկ, ուտելի (Салатъ полевой или рапунцель обыкновен. Valerianella olitoria): Բաղձամեայ բոյս է, շրթնածաղիկների ցեղից. ծածկուած է սպիտակ ու կարմիր բաղձաթիւ երակներով, ծաղկում է յունիսից—օգոստոս. նեկտարաշարութեամբ իւր դասակարգի մէջ եղածներից գերադաս է համարուում: (Նկ. № 3)



Նկ. № 3.

Ուտելու Աղբաղբուկ (Սիմսիմուկ)



Այժառերն

Սրա բոյսի բոլոր մասերն էլ ունին դուրեկան սուր հոտ: Աղբաղբուկը գործ է ածուում բժշկութեան մէջ իբր գրգռիչ, բերտնաբեր, կրճեացաւի, աղիքների գալարման (կատար), հազի, ջը-

դալին գրգռման և այլ ցաւերի դէմ. սա իւր բուժիչ յատկութիւններէ համար վաղուց յայտնի էր տնային բժշկութեան մէջ: Կատունները բնագոյմամբ սրան ճանաչում և շատ սիրով ուտում են. գուցէ որեւէ ցաւի նրանց էլ է օգնում:

Ա Յ Ծ Ա Տ Ե Ր Ե Ի ✓

Սրա ծաղիկները երկշրթեան են. ունեն անուշաբոյր հոտ և առատ ծաղկափոշի. մագլցող թուփ է. բուն Այծատերեւը—հաւաղերկուտին (Նկ. № 4) (Жамолость, *Lonicera Caprifolium*) առատ բուսնում է ամեն սարալանջերում. սիրում է արեւակող տեղեր. սրա տեսակները շատ են. ինչպէս՝ Բալխսուր (*Lonicera coerulea* Յախակեռաս (*L. Xylosteum*) կամ Բարբարական (*L. tatatica*) ցախակեռաս և այլն:

Ա Ն Ծ Ն Ի ✓



Նկ. № 5

Անձնի ճանճային.

սը ժանկագոյն է, իսկ ծաղիկները՝ սպիտակ են ու հովանաձև:

Սրա ծաղիկները մեղուններին լաւ բերք են տալիս, իսկ տերեւները՝ բժշկութեան մէջ հին ժամանակները շատ էին գործադրում. իսկ այժմ հազուստեղէնը ցեցից աղատելու համար են գործ ածւում, նոյնպէս էլ գինի ու զարեջուրը կեղծելու համար են բանեցնում. (Նկ. № 5).

Սա թմբրեցուցիչ թունաւոր թուփ է. սրա գորշ—խաւոտ ու մշտադալար տերեւների տակի երեւ-

Սիրում է չորաւուն հող. սրա ծաղիկներից պատրաստած մեղրը թմբրեցուցիչ յատկութիւն ունի:

Մշտավարդենու շատ տեսակներ կան՝ կարմրագոյն, դեղնագոյն ծաղիկներով մութ—կանաչ տերեւերով և այլն, որոնք պարտէզներումն էլ են մշակւում:

Ա Պ Ո Ւ Զ Ա Ն ✓

Ապուզան Գրքատերեւ. (*Княпрей, Иванъ-Чай, Epilobium angustifolium* L.) բազմամեայ խոտաբոյս է. Կովկասում ամեն տեղ կայ. աճում է մինչև 9000 ոտ. ծ. մ. բարձրութիւններում. սի-



Նկ. № 6

Ապուզան

րում է ստուերոտ, զով և թացաւուն տեղեր. բազմանում և շատ յաջող է առաջ դալիս ինչպէս արմատները տնկելով, նոյնպէս էլ սերմը ցանելով: Ծաղկում է յուլիսին և օգոստոսին. (Նկ. № 6).

Սրա տերեւներից պատրաստում են կօպորի քիյ (копорский чай). այսպէս է կոչուել այս թէյը Պետերբուրգի նահ. Կօպոր գիւղի անունով, ուր առաջին անգամ գործադրեցին նրան փորա-

դային գրգռման և այլ ցաւերի դէմ. սա իւր բուժիչ յատկութիւններէ համար վաղուց յայտնի էր տնային բժշկութեան մէջ: Կատուները բնագոյնամբ սրան ճանաչում և շատ սիրով ուտում են. գուցէ որեւէ ցաւի նրանց էլ է օգնում:

Ա Յ Ծ Ա Տ Ե Ր Ե Ի ✓

Սրա ծաղիկները երկշրթեան են. ունեն անուշաբոյր հոտ և առատ ծաղկափռի. մագլցող թուփ է. բուն Այծատերեւը—հաւակըրկոտին (Նկ. № 4) (Жамолость, *Lonicera Caprifolium*) առատ բուսնում է ամեն սարայանջերում. սիրում է արևակող տեղեր. սրա տեսակները շատ են. ինչպէս՝ Բալխուր (*Lonicera coerulea* Յախակեռաս (*L. Xylosteum*) կամ քաքարական (*L. tatarica*) ցախակեռաս և այլն:

Ա Ն Ծ Ն Ի ✓

Ածնի ճանճային, Անդրոմեա կամ Բաւոտ մրտախարդ (Богучьян, *Ledum palustre* L.) ցածրաւուն թուփ է, տերեւները նեղլիկ, ծաղկափունջը սպիտակ, յաջող է աճում Եւրոպայի և Ասիայի ճանճային ու մամուղատ տեղերում:



Նկ. № 5

Անծնի ճանճային.

սը ժանկագոյն է, իսկ ծաղիկները՝ սպիտակ են ու հովանաձև:

Սրա ծաղիկները մեղուններին լաւ բերք են տալիս, իսկ տերեւները՝ բժշկութեան մէջ հին ժամանակները շատ էին գործադրում. իսկ այժմս հագուստեղէնը ցեցից ազատելու համար են գործ ածում, նոյնպէս էլ գինի ու զարեջուրը կեղծելու համար են բանեցնում: (Նկ. № 5).

Սա թմրեցուցիչ թունաւոր թուփ է. սրա գորշ—խաւոտ ու մշտադալար տերեւների տակի երե-

Սիրում է չորաւուն հող. սրա ծաղիկներից պատրաստած մեղրը թմրեցուցիչ յատկութիւն ունի:

Մրտավարդենու շատ տեսակներ կան՝ կարմրադոյն, դեղնագոյն ծաղիկներով մութ—կանաչ տերեւերով և այլն, որոնք պարտէզներումն էլ են մշակւում:

Ա Պ Ո Ի Զ Ա Ն ✓

Ապուզան Երբատերեւ. (Кипрей, Иванъ-Чай, *Epilobium angustifolium* L.) բազմամեայ խոտաբոյս է. Կովկասում ամեն տեղ կայ. աճում է մինչև 9000 ոտ. ծ. մ. բարձրութիւններում. սի-



Նկ. № 6

Ապուզան

րում է ստուերոտ, զով և թացաւուն տեղեր. բազմանում և շատ յաջող է առաջ գալիս ինչպէս արմատները տնկելով, նոյնպէս էլ տերմը ցանկով: Ծաղկում է յուլիսին և օգոստոսին: (Նկ. № 6.)

Սրա տերեւներից պատրաստում են կօպորի քիչ (копорский чай). այսպէս է կոչուել այս թէյը Պետերբուրգի նահ. Կօպոր գիւղի անունով, ուր առաջին անգամ գործադրեցին նրան փորա-

կապի և գլխացաւի զէպքերում սրանից պատրաստած թէյը հիւանդին խմացնելով. չորացրած տերեւները փշրելով ցանում են վէրքերի վրայ, որից շուտով լաւանում են:

Այս բոյսը թէ և նեկտարաշատ է, բայց ունի քիչ սուր համ. սրա ծաղիկներից ստացուած մեղրը լինում է ընտիր, անուշաբոյր, թէ և գոյնը կանաչաւուն է:

Ծաղկում է ճիշտ մեղունների լաւ գործունէութեան միջոցին, երբ շատ ծառերի և բոյսերի ծաղիկները թափուած—վերջացած են լինում:

Սրա մատղաշ տերեւներից շինում են աղցան, որը բաւական քաղցրահամ է. իսկ արմատները թրջոց դնում, որ թթուի—խմորուի (են գայ) ու նրանից պատրաստում են ոգելի խմիչք (օղի):

Ա Ռ Ի Ի Ծ Ա Գ Ի

Առիւծագի կամ փայրի փաթրինջ (Пустьырникъ, Leonurus Cardiacus L.). բազմամեայ շրթնածաղիկ բոյսերի ցեղիցն է. աճում է Անդրկովկասի գրեթէ ամեն տեղերում, տալիս է շատ առատ ծաղկափողի:

Սա իւր անուշաբոյր հոտի և կազդուրիչ յատկութեան համար շատ վաղ ժամանակներից գործադրում է տեղական բժշկութեան մէջ՝ ստամոքսային զալարումների և սրտի ցաւի դէմ. իսկ այժմեան բժշկութեան մէջ սրա չորացրած և փոշիացրած բոյսը զանազան ձևերով պատրաստած գործ է ածւում շատ հիւանդութիւնների դէմ. օր. անքնութիւն ունեցողին տալիս են սրա փոշին ներշնչելու իբրեւ քթախոտ (բոնօթի), իսկ խաշած արմատների ջուրը շատ անգամ գործ է ածւում Աղբաղբուկի (վալերիան) փոխարէն: Եթէ սրա խաշած ջրով լուանան վիրաւոր անասունի վէրքերը, վերջինիս մէջ եղած մանր ու մեծ որդերը կը կոտորուեն—բնաջինջ կլինեն ու անասունը շուտով կառողջանայ: (Նկ. № 7.)



Նկ. № 7.

Առիւծագի

մատնների ջուրը շատ անգամ գործ է ածւում Աղբաղբուկի (վալերիան) փոխարէն: Եթէ սրա խաշած ջրով լուանան վիրաւոր անասունի վէրքերը, վերջինիս մէջ եղած մանր ու մեծ որդերը կը կոտորուեն—բնաջինջ կլինեն ու անասունը շուտով կառողջանայ: (Նկ. № 7.)

Ա Ռ Ի Ո Յ Տ

Առուոյտ կապոյտ, ասպաստ, (թուրքերէն Խոնջայ, Люцерна, Medicago sativa L.). բազմամեայ խոտաբոյս է, լինում է շատ տեսակներով. թիթեռնածէ ծաղիկները լինում են զանազան գոյնների, այն է՝ մանուշակագոյն, կարմրաւուն, սպիտակ, դեղին և այլն. միևնոյն տեղում հողի մէջ խոր գնացած արմատների շնորհիւ առուոյտը պարում է շատ երկար տարիներ. (10—20 տարի): Իբրեւ անասունի կեր՝ տարին հնձւում է 3—4 անգամ (մեղմ ու տաք կլիմայում). ամեն հնձելուց յետոյ, երբ ջրուի, կտայ նոր ցողուններ, որոնք դարձեալ առատապէս ծաղկում են. ուրեմն մեղուապահը առուոյտի ծաղիկ կարող է միշտ ունենալ, եթէ ունենայ մի քանի արտեր և եթէ նրանց յաջորդաբար հնձելու լինի, որով մեղունների մանրապաշարը մինչև աշնան վերջերը—ցրտերի ընկնելը, ապահոված կլինի:



Նկ. № 8.

Առուոյտ

Առուոյտի տեսակները շատ են. նրա նման նեկտարաշատ են նաև երեքնուկների, կորնգանի, վիկի, շաբդարի և յունական առուոյտի (շաբալան, Trigonella Foenum graccum) ծաղիկները: (Նկ. № 8.)

Ա Ր Ի Ն Ջ

Արինջ բնուանի կամ հնդկացորեն (Гречиха, Polygnum fagopyrum). Սա միամեայ բոյս է, մի ոտնաչափ բարձրութիւնով, ցողունը ուղիղ, կարմիր ու խաղերով (կապերով), տերեւները պտեկաւոր. մանր կարմրասպիտակ ծաղիկները ոստերի ծայրերին է ժողովուած. պտուղը մանր, երեքանկիւնի ու չաւաղորշ են: Սրա բուն հայրենիքը հարաւային Ասիան է համարւում, բայց գրեթէ ամեն տեղ էլ մշակւում է:

Ծաղկում է յուլիսին—Օգոստոսին: Հնդկացորենը լինում է 150 տեսակներով, ամենից արդիւնաւորն է քուխ կամ տաճիկցորեն (P. tatarica) կոչւածը, որը միւսներից զանազանւում է

իւր կանաչուուն ծաղիկներովը: Այս տեսակը ժԸ դարում Ասիայից եւրոպա տարուեց: (Նկ. № 9).

Արինջի ամեն տեսակների խոտը և սերմը անասնոց լաւ կեր է, իսկ ծաղիկները՝ տալիս են առատ մեղրապաշար:

Սրա մի տեսակը դեղին, մի ուրիշը—կապոյտ ներկ են տալիս:

Ռուսաստանում արդիւնաբեր բոյսերից մէկն է: Տնտեսութեան մէջ սրա 4 գլխաւոր տեսակներն են բանեցնում, այն է՝ մի տեսակի հատիկից ձաւար են շինում կերակրի մէջ գործածելու համար. մի տեսակը ցանում են (Ֆրանսիայում) լեղակ շինելու համար, երրորդ տեսակը՝ հէնց կանաչը հնձում ու տաւարին են տալիս, իսկ չորրորդ տեսակը մշակում է բացառապէս Հնդկաստանում, Հիմալայեան լեռնաշղթաների լանջերում: Եւրոպայում այս տեսակը կարելի է տեսնել միայն մի քանի բուսաբանական պարտէզներում:

Ռուսաստանում արինջը յարգի տեղ է բռնում թէ տնտեսութեան մէջ և թէ շուկայում. այնտեղ նրան ցանում են մինչև անգամ հիւսիսային նահանգներումն էլ:



Նկ. № 9

Արինջ ընտանի

Բ Ե Կ Տ Ե Ն Ի

Բեկտեմի. Ալաթահրի, դժնիկենի, մամխի, բանդի (Крушина, Rhamnus L.): Միջակ բարձրութեան ծառ է Rhamnaceae ցեղից. սա լինում է շատ տեսակներով. թէև սրա ծաղիկները մեղրատու են, ունեն ծաղկափողի և ծաղկում են մայիսից—օգոստոս, բայց աւելի զնահատելի է բժշկութեան մէջ սրա կեղևը՝ իբրև լաւ լուծողական. իսկ պտուղների խափ կորիզից ստացւում է դեղին գոյն:

Բեկտենին բարեխառն երկրի բոյս է, կարող է աճել մինչև 5—7 հազար ոտ. ծ. մ. բարձր երկիրներում:

Անդրկովկասում սրա տեսակներից շատ կան:

Մամխնու փայտը լինում է դեղնա—կարմիր գոյնով. փուխը է ու թեթև (տեսակարար միջին կշիռն է 0,59), սրանից շինում



Նկ. № 10

Բեկտենի

ա) Տերևոտ, բ) Մանրածաղիկ, գ) Պտուղ

են մեխեր, գինու փոքրիկ տակառների համար ծորակներ և էլլե. ուրիշ շատ մանր բաներ: (Նկ. № 10).



Բ Ռ Ն Չ Ի

Բուճի, Թուրը Դաղդղան աղաջի, (Калына, Viburnum Opulus L.):
Սրա տեսակները շատ են, իսկական Բուճու տերեւները եռաթաթ



Նկ. № 11

Բ ո ճ ի

են, սպիտակ ու առատ ծաղկապսակով օժտուած, որոնց մանրածաղիկները մասամբ կամ բոլորովին անգլուղ են մնում: (Նկ. № 11).

Գ Ա Յ Լ Ո Ւ Կ

Դալլուկ, Շարժաշուղ (Хмель, Humulus Lupulus), բազմամեայ, մազլցող տունկ է. ծառերի, ցանկապատերի վրայ մինչև 20—25 արշին երկայնութեամբ բարձրացող, տերեւները լինում են 3—5 բլթեան ու առամուտր. կանաչ բաժակաւոր ծաղիկները՝ երկտուն են ու խոտակերպ պտղի կոն են կազմում, շատ անուշաբոյր և դրաւիչ են ժեղունիքին:

Վայրի դրութեամբ դալլուկը բուսնում է առատութեամբ Ամերիկայում, Եւրոպայում, նաև Անդրկովկասում:

Պտղի կոները դառնահամ լինելով գարեջրի մէջ են խառնում, որի և առից տարի դրա պահանջը շատանալով սկսել

են նրան մշակել: Գերմանիայում դրա մշակութիւնը մեծ տեղ է բռնած:

Ծաղկում է Յուլիսին և Օգոստոսին:



Նկ. № 12

Դալլուկ.

ա) Տունկը, բ) Ծաղկողկոյզ, գ) Կոն (Պտուղը):

Իբրև փաթաթւող տունկ, գալլուկը վայրի որթատունկի (վաղի) նման, որին էլ շատ է նմանում, ցանկապատերի մօտ են տնկում: (Նկ. № 12):



Գ Ո Ն Գ Ե Ղ

Գոնգեղ, (Рапст, Brassica Napus) Այս դաշտակաղամբը, պատկանում է խաչածաղիկ (Крестоцветные, Cruciferae) խոտերի ցեղին։



Նկ. № 13.

Գոնգեղ

ա) Ծաղկոստ, բ) Տերև, գ) Արմատ.


սրանից ստացւած մեղրը անգոյն է։ Բոյսը շատ լաւ է կանաչ պարարտացման համար։ (Նկ. № 13).

սրան մշակում են շատ հին ժամանակներից։ Հացահատիկի աշնավար ցանքից օգտւելով, մեղուները շատ շուտ ձագակալում են, իսկ գարնավարը լաւ է նրանով, որ ուշ ծաղկելով, մեղուները օգտւում են նրա նեկտարից և ծաղկափոշուց։

Սրա սերմերից իւղ են հանում թէ վառելու և թէ սև սապոն շինելու համար, իսկ քուսպը բոյսի չոր խոտի հետ անասունների համար սննդաբար կեր է լինում։


Կաղնիտի յատկութիւն ունենալով, կաղնիներ կաղնիտելու համար էլ է գործածւում։ Յարդիցը բորակ (պօտաշ) էլ են շինում։

Գոնգեղի բոլոր տեսակների ծաղիկները նեկտարաշատ են։ սրանից ստացւած մեղրը ան-



Ե Լ Ա Գ

Ելագ, խմորուկ, իծամորի, գետնաթուխ, մորի (Земляника, Fragaria vesca)։ Ամենին ծանօթ և սիրելի այս հատապտուղը անտառի եղերքը և կտրուած տեղերն է առատութեամբ բուսնում։ Նեկտարաշատ և սպիտակ ծաղիկը ծաղկում է ապրիլից մինչև յունիս, ունի մանր, բաց—կարմրաւուն գոյնի համեղ ու անուշահոտ պտուղներ։ (Նկ. № 14).



Ե Լ ա գ

Նկ. № № 14, 15.

ա) վայրի ելագի տունկը. բ) Պտուղը. գ) Ընտանի ելագ.


Սրա մշակուածը, Արքայամորին (Նկ. № 15) (Клубника, Fragaria grandifolia) կամ Ընտանի ելագը (Fragaria elatior) առաջ է եկած վայրի ելագից. նրանից թէև մեծ, գեղեցիկ ու հրապուրիչ տեսք ունի, բայց վայրենի ելագի պէս համեղ չէ։

Երկու տեսակի պտուղները սկսում են հասնել ապրիլից և տևում են մինչև յունիսի վերջերը, նայելով երկրի դիրքին։

Ե Ղ Ե Ս Պ Ա Կ

Եղեսպակ հասարակ, (Шалфей, *Salvia officinalis* L.) բազմա-
մեայ, շրթնաձողիկ բոյս է. սրա շատ տեսակներն են լինում: Ան-
դրկովկասում Եղեսպակը ինքնաբոյս է և առատ, իսկ Ռուսաստա-
նում և արտասահմանում նրան յատկապէս մշակում են: (Նկ. № 16).

Այս բոյսը բացի նեկտարաշատ առատ ծաղիկներ տալուց, մատ-
ղաշ ժամանակն էլ գործ է ածում իբրև աղցան և կերակուրների մէջ
խառնում իւր համի և դուրալի հոտի համար. ունի նոյնպէս և
բուժիչ յատկութիւն՝ մի քանի բարձր հիւանդութիւնների դէմ:



Ն կ ա ր № 16.

Եղեսպակ

(Վերի մեղուն բերք է ժողովում, իսկ ցածինը բեղմնաւորում է կնիքը.)

Սորանից ստացած եթերային իւղը (*Oleum Salviae*) անուշ-
աբոյր է, խառնում է թանգարժէք օժանելիքների և սապոնների
մէջ. սրա բոյսի հիւթովը կաղնիտում են քնքոյշ կաշուեղեններ.
իսկ խառնելով գինու և գարեջրի մէջ, նրանց տալիս է առանձին
հաճելի հոտ և համ:

Եղեսպակը լինում է շատ տեսակների. (մինչև այժմս ճանա-
չուած է 450 տեսակ), ամենքն էլ մեղունների բերքի համար նեկ-
տարամբար են:

Ե Ղ Ե Ր Դ Ա Կ

Եղերդակ, ճարճարտուկ, (Цикориѣ, *Cichorium intybus* L.)
(Նկ. № 17). Երկարամեայ բարդաձողիկ բոյս է. սորա արմատը
չորացնում, բովում, աղում ու խառնում են սուրճի (դահուէ) հետ:
Բաղադրեալ նիւթերն են՝ 11% ինուլին և 20% շաքար:

Սրա արմատը երբ բովում կամ խաշում է, կորցնում է
իւր դառնութիւնը. բոյսի մատղաշ տերևները լաւ աղցան (սա-
լաթ) է լինում, մանաւանդ մշակուածինը, որ առելի աղնիւ և դը-
րեթէ զառնութիւն չունի:



Ն կ. № 17.

Եղերդ

Եղերդակի թէ կանաչը և թէ չորը տաւարի լաւ կեր է ու
կաթն առատացնող:

Փոքրիկ—կապտաւուն ծաղիկները առատ մեղրատու են:

Շատ հիւանդութիւնների ցաւերի համար նրա բոյսերից և
արմատներից պատրաստում են զանազան դեղեր:

Սորա ծաղիկները եղանակի լաւ ազդանշան են—երբ նրանք
բաց են լինում, նշանակում է, որ լաւ եղանակ է լինելու, իսկ
երբ փակ են մնում—օրը ամպամած կամ անձրեային է լինելու:
Աճում է անխափր ամին տեսակ հողերում:

Ե Ղ Ն Ճ Ա Մ Ա Յ Ր

Եղնճամայր, Բանդարամայր կամ անմեղ եղինճ, (Крapiвa
глухая, *Lamium maculatum*) (Նկ. № 18): Արմատը՝ մաղձգուկնե-



Նկ. № 18.
Եղնճամայր սպիտակ

Առհասարակ եղինճների թէ թուփը և թէ արմատը ունին
բուժիչ յատկութիւններ և գործ է ածւում մի քանի հիւանդու-
թիւնների դէմ:



ով ու շատ տարածւող, ցողունը
բարձր ու չորեքկողմանի, թաւա-
մաղ տերեւները՝ սրածայր, հաստ ու
անհաւասար առաջնաւոր: Ծիրա-
նագոյն — կարմիր ծաղիկները բո-
նում են տերեւանկիւնների կող-
մերը, ծաղկապսակը երկշրթուն-
քանի է. ունի 4 փողանոթ՝ 2-ը
երկայն և 2-ը կարճ, իսկ պտու-
ղը բաժակի յատակին է կպած:
Եղնճամայրի տեսակները շատ
են. նրանք իրարից դանազան-
ւում են զլխաւորապէս ծաղիկնե-
րի գոյներովը: (Ծծուկ, *Ajuga*
reptans). Սրանք բոլորը լաւ
մեղրատուներ են, ունին եթերա-
կան իւղ, որից պատրաստւում է
օ-ղը — կօլօն (*Eau de Cologne*)
ասւած անուշահոտ ջուրը:

Ե Ր Ե Ք Ն Ո Ի Կ Ն Ե Ր

Երեքնուկ սպիտակ-սիրի-
սիրի (Նկ. № 19) (Клеверъ
бѣлѣй, ползучій, *Trifolium*
repens L.): Կարմիր երեք-
նուկները (Նկ. № 20), լի-
նում են նաև Շահակահ
(Նկ. № 21) և վայրի Նկ. № 22)
տեսակները...

Սրանք ամենքն էլ բազ-
մամեայ — թիթեռնածաղիկ
(Матилъковыя, *Papillon-*
aceae) խոտաբոյսեր են, լի-



Նկ. № 19.

Սպիտակ երեքնուկ
նում են թէ ինքնաբոյս և
թէ մշակւում են:

Սրանց ծաղիկները նեկ-
տարաշատ ու մեղուներին
առատ ու երկարատե մեղ-
րապաշար տուղներ են. ծա-
ղկում են հետզհետէ սկսած
վաղ զարնանից և տևում են
մինչև աշնան վերջերը:
Սրանից ստացւած մեղրը

Նկ. № 20.

Կարմիր երեքնուկ





Նկ. № 21.

Շվեդական երեքնուկ

դան հիւանդութիւնների դէմ.
նրանցից պատրաստում են շատ
տեսակ դեղեր՝ օծելու, խմելու և
սպեղանու համար:



Նկ. № 22. Վայրի երեքնուկ
a) Ցողունը, b) Արմատամասը, c) Մի
ծաղիկը.

Ը Ն Տ Ա Ն Ի Կ Ա Ղ Ն Ի Վ

Ընտանի կամ Արքայականի կամ աղողին, Փընտըղ, (Дешина, *Corylus Avellana*): Սա պատկանում է մասամբ *Corylaceae* և մասամբ էլ *Amentaceae* ընտանիքին: Ընտ. կաղնին մեր Կովկասին յայտնի և գրեթէ յատուկ թփածառերից մէկն է. ունի շատ տեսակներ, որոնք բուսնում են թէ վայրի դրութեամբ և թէ մշակւում են պարտէզներում: (Նկ. № 23).



Նկ. № 23.

Ընտանի կաղնի

Այս կաղնին օգտաւէտ է որքան իւր պտուղներովը, նոյնքան էլ մեղուաբուծական տեսակէտից. նշանաւոր է նաև նրանով, որ նրա գլանաձև երկսեռ ծաղկափնջերը վաղ զարնանը տալիս են մեղուներին պիտոսնացու առատ նեկտար:

Այդ թփածառի փայտը աւելի ճկուն և թելոտ լինելով, սորա մատղաշ ոստերը երկուսի ճեղքելով, պատրաստում են տակաղալ շրջանակներ:

Թ Թ Ե Ն Ի

ԹԹԵՆԻ, սպիտակ *) (Шелковица, Morus alba): Սա լինում է



Նկ. № 24 Հինգամեայ քրեճի


շատ տեսակներով. մեղրատու են ինչպէս ծաղիկները, նոյնպէս էլ պտուղները: (Նկ. № 24).

*) ԹԹԵՆԻ իբրեւ տրդիւնաբեր ծառի, ընդարձակ նկարագրութիւնը տես «ԹԹԵՆԻ» գրքիցում, հրատարակութիւն «Գիւղատնտես»-ի կազմած Ն. Ս.


ԹԹԵՆԻՆ ԵՐԷ մեղրատնոցի կամ պարտիզի շուրջը տնկուի



Նկ. № 25. Տնկուած քրեճու սնկարանի մի շար:



Նկ. № 26 ԹԹԵՆԻՆԻ ցանկ:



Նկ. № 27 ԹԹԵՆԻՆԻ ցանկ:

Երեք կարգ— իրարից 1 արշին հեռու ու 2—3 տարուց յետոյ 2½

արշին հողից բարձր գլխները խուզուի, բներիցը դուրս կը գան շատ ուտելու: սրանք իրար հետ հիւսուելով կամ հէնց տէրը եթէ հիւսի, կը դառնայ հիւսնալի և զանազան ձևերով անանցանելի ցանկապատ, որի տերևներից—շերամի որդերի լաւ կեր կտացուի: (Նկ. № 25, 26 և 27).

Թ Ղ Կ Ի

Թղկի սրտերե, Պեխի լախատերե կամ Բձղի (Клеф, Acer Platanoïdes L.) (Նկ. № 28) անտառային ծառ է: լինում է չորս տեսակի:



Նկ. № 28

Թղկի սրտերե

ա) Ոստ ծաղկած, բ) Թևապտուղ

Փնջաձև ծաղիկները լաւ մեղրատու են, իսկ ամառները տերևներից մեղրացող է արտադրում: Թղկենու փայտը տընտեսութեան մէջ շատ գործածական է: Աճում է այս ծառը բարեխառն երկիրների անտառներում (2—6 հազար ոտ. ծ. մ. բարձրութիւնների վրայ):

Պարտէզներում և փողոցային ծառուղիներում սրանցից տընկելու համար յատկապէս ցանում են սերմը և ժամանակին ստանում են պէտք եղած քանակի տնկիներ:

Սրա բունը ուղղահայեաց բարձրանում է երբեմն մինչև 80 ոտ:

Աշնանը թափած տեւեները տնային անասուններին լաւ կեր է, նոյնպէս և ձմեռը գոմայատակին փռելու լաւ նիւթ. ներկարարները նրա տերևներից դեղին գոյն են պատրաստում. իսկ երկաթի արջասպի հետ խառնելով սև գոյն են ստանում:

Փայտը լինում է կարճը, որով և լաւ վառելափայտ է. իսկ մոխիրը՝ բորակաշատ:

Սոքա փայտից պատրաստում են նւագարաններ, դռաներ, սանրեր և սրանց նման մանր շատ բաներ:

Թ Ո Ք Ս և Ո Տ

Թորախոտ նաւարակ. (Легочница, Медуница, Pulmo-



Նկ. № 29.

Թորախոտ իւր արմատով

naria officinalis, Tourn). Ժողովուրդը սրան անւանում է մեղրածուկ. բուսնում է անխափր ինչպէս Եւրոպայի (Նկ. № 29),

նոյնպէս և Արեւմտեան Ասիայի բարեխառն երկիրներում. ծաղիկներն բացուելիս վարդա-կարմիր են, իսկ յետոյ փոխւում են մուգ—կարմիր և մանուշակակապոյտ գոյների, նրանք առատ են նեկտարով և գարնան սկզբներին բացւելով լաւ մեղրատու են. մեղրածծուկը լինում է շատ տեսակներով. դրինք նրանցից միայն երկու տեսակների նկարները (Նկ. № 30).



Նկ. № 30

Մեղրածծուկ

- 1) Ծաղիկ, 2) Տերևը, 3) Նրկարութեամբ կտրած ծաղիկը (մեծացրած), 4) Պտուղը.

Սրանց բոյսը տնային բժշկութեան մէջ գործադրւում է զանազան հիւանդութիւնների դէմ:

Անգլիայում թորախոտի մշակութիւնը շատ է ընդհանրացած. այնտեղ դորա արմատների մօտ եղած մատղաշ տերկներից շինած աղցանը շատ յարգի խորտիկ է համարւում:



Ի Ժ Ա Խ Ո Տ ✓


Իծախոտ. (СИНЯКЪ, ежовикъ, Echum vulgare L.) երկամեայ խոտ է. մեղրաշատ ծաղիկները շարուած են լինում ցողունի բոլոր երկայնութեամբ, որոնք նախ լինում են կարմրագոյն և յետոյ կապտաւուն. առաջները սրանից դեղ էին պատրաստում ուշաթափութեան կամ օձի խայթւածքի դէմ: (Նկ. № 31).



Նկ. № 31

Իծախոտ

Աճում է գրեթէ ներպայի և Կովկասի ամեն կողմերում, բացի շատ ցուրտ տեղերից. սա ինքնաբոյս է, բայց երբեմն մեղուանոցների մօտերըումն էլ են ցանում սրան:



Լ Ա Ս Տ Ե Ն Ի Վ

Լաստեցի սպիտակ, (Ольха, *Alnus incana* De., *Alnus glutinosa* L.). անտառային տերևաւոր ծառ է, ծաղկում է շատ վաղ զարնանք:

Լինում է մինչև 14 տեսակ լաստենի, ամենքն էլ լաւ մեղրատուներ են:

Սրա ծաղիկը պատկանում է գինդածաղիկ (Amentaceae) բուսացեղին:

Սև լաստենին իւր փայտի յատկութեամբը շատ յարգի է. բունը արտաքուստ նման է կաղնուն:



Նկ. № 32 Լաստենի

ա) Տերևաւոր, բ) Կնքածաղիկ, գ) Փռչեկատուիկ, զ) Կոն.

Ծառը յաջողութեամբ բազմանում է իրենից թափուած սերմերից, մինչ զեւ մարդու ձեռքով ցանածը շատ անգամ յաջող է բուսնում:

Լաստենու փայտը թեթև ու զիւրաբեկ է, թէև շինութեան համար անպէտք, բայց հողում, մանաւանդ խոնաւ տեղերում, շատ գիմացկուն է լինում:

Սրա բունից աղացուած տախտակները կամ փայտը քանի նոր են, կարմիր գոյն են ստանում, բայց կարճատե են մնում այդ գոյնի: Եւ Նեկտարաշատ են լինում գարնան սկզբին առաջ գինդածէկախ ընկած ծաղիկները: (Նկ. № 32).

Լ Ո Ր Ե Ն Ի

Լորենի, բմբի, ըլօրնի, (Թուրք. ջեօկա-աղաշի, Липа, *Tilia*) ծառը պատկանում է Tiliaceae ցեղին. երկարակեաց է, բարեյաջող հանգամանքում կարող է ապրել մինչև 800 տարի:

Երկսեռանի կանոնաւոր ծաղիկները երևում են երկու տարեկան ուստիկների տերեւների կոթերի կողքերից, իսկ նրանց մօտ արդէն կազմւած են լինում առաջիկայ տարւայ բուսնող կոկոնները: Ծաղիկները համախմբւած են մի կոթի վրայ, որը կպած է վահանաձև կիսաթափանցէ երկարաւուն մի թերթիկի:

Լորենու ծաղիկները բաց դեղնաւուն են. նրա բազմառէջներով ծաղկակալը ունի 5 թերթիկներ. պտղամանը 5 բուն ունի մի առանցքի շուրջը ամրացած. սերմերը չորսհատիկ են: Իսկ նրանցից բուսած ձկերը— իւզալի: Փայտամաշկը շատ թելոտ է ու զարգացած. բազմաթիւ շերտաթիւթիկներ գոյացնելու պատճառով, չի կարելի նրանցով որոշել ծառի տարիքը:

Աւելի շատ տարածւած է փոքրատերեւ լորենին (*Tilia parvifolia*) նա դիմանում է բաւական ցրտերին և աճում է մինչև 64° հիւս. լայն. տակ. իսկ հարաւ՝ ձգւած է նա մինչև Ղրիմի և Կովկասի լեռնալանջերը: Միջին Ռուսաստանի անտառների մեծ մասը լորենին է բուսած, մանաւանդ Հազանիճի Կոստրօմի նահանգներում:

Ծաղկում է մայիսի վերջերին, իսկ աւելի ցուրտ տեղերում մինչև անգամ յունիսին և յուլիսին: Ամեն ծաղկակալի վրայ լինում է 5—7 ծաղիկ. պտուղը հասնում է հոկտեմբերին. ձմեռը ծառից նա թափւում է գետնի վրայ, ուր գարնանը ձյունի միջով ծառի բունը ուղղածիգ է, ոստերը աւելի ամփոփ և խիտ ու ծառի վերնամասի զրուծիւնը աւելի կլորաւուն է:

Մինչև 20—30 տարեկան բունի կեղևը մոխրադոյն է և լիւր՝ իսկ աւելի մեծերի կեղևը բնի երկայնութեամբ ճաքճաքում ու թխադոյն է դառնում:

Պտղակալում է 20—30 տարեկանը. 1 ֆունտ պտուղի մէջ լինում է մինչև 20 հազար հատ մաքուր հունդ:

Նրա բարձրանալը տևում է մինչև 50—60 տարի, այնուհետև կրկնէ դադարում է բարձրանալուց. բայց դրա փոխարէն սկսում է հաստանալ ու այս շարունակում է շատ երկար ժամանակ:

Արմատները առատ են. կոճղից բաժանւում են 2—3 զլխաւոր արմատներ, որոնք գրեթէ ուղղահայեաց մտում են խոր հողի մէջ. այս պատճառով է որ լորենու բուսած տեղը

եթէ ուզենանք ուրիշ բոյս տնկել, նրա արմատները իսպառ մաքրելը շատ դժւար է լինում:

Արմատից դուրս եկած ընձիւղները շատ առատ են լինում. սրանց թէ ցողուններն են կանաչ ու փարթամ, թէ տերեւներն են մեծ ու առատ:

Լորենին հողի խտրութիւն թէ և չը գիտէ, բայց չէ սիրում չորաւուն հողերը. լաւ է զարգանում խոնաւ, մինչև անգամ թացաւուն տեղերում: (Նկ. № 33).



Նկ. № 33 Լորենի

ա) Ծաղկոտ, բ) Ծածկատերեւ պտուղներ, (սերմեր) գ) Մանրածաղիկ.

Քանի որ լորենին թէ ոստաշատ է և թէ տերեւաշատ, ուրեմն և լաւ ստուերատու ծառ լինելով, իր տակի հողը կարողանում է երաշտից լաւ պաշտպանել. դրա համար էլ երաշտից վախ եղած տեղերում դրան տնկելով այն օգուտն են ստանում, ինչ որ Գերմանիայում հաճարենի (Eiche, Fagus sylvatica) տնկելուց են ունենում: Պարտէզներում լորենին (ցանածը կամ տընկածը) շատ գանդաղ է զարգանում. գերադասելի է տնկոտեղ անտառից հանած արմատակալած ընձիւղները. լաւ է լինում նաև սրան անդալիսով բազմացնելը, որը անում են այսպէս.

արմատից դուրս եկած մի տարւայ ընձիւղը կոացնում և հողով ծածկում են՝ նրա ծայրը դուրս բերելով հողից. այնտեղ ուր բոյսի աչքը գետնի մէջն է, դուրս են գալիս նոր արմատներ:

Լորենու փայտը սպիտակ, թեթեւ, փափուկ ու միապաղաղ զծագրութիւնով է. նա թէ և ամուր չէ, բայց ատախճագործի ձեռքում շատ յարմար փայտ է, որովհետև շատ քիչ է ծուռում: Նրա թարմի տեսակարար կշիռն է 0, 82, իսկ կտրած—չորացածինը՝ 0, 47:

Իբրև վառելափայտ լորենին անպէտք է, նրա ածուխը գործադրում են նկարիչները, բայց աւելի շատ պէտք է գալիս վառօդ շինելու համար:

Լորենու բնակեղնը արդիւնաբերական մեծ նիւթ է. նրանից շինում են փսիաթ (ճիւօթ), արկղիկներ և զամբիւղներ: Ծաղիկները մեղուներին տալիս են ընտիր ու առատ մեղր. բացի դրանից, զեղատներում էլ շատ է գործադրում. պտուղների նուշը իւղալի է. տերեւները և մատղաշ ոստերը ընտանի անասունների համար լաւ կեր են:

Կան, ինչպէս Կովկասում, նոյնպէս և ուրիշ տեղերում լորենու ուրիշ տեսակներն էլ՝ մեծատերեւ լորենի (Tilia grandifolia). սրա տերեւները աւելի մեծ են. վերի երեսը լերկ, իսկ տակինը ծածկւած է աղւամաղով. ծաղկակոթի վրայ լինում է միայն 2—3 ծաղիկ. պտուղները համեմատաբար աւելի խոշոր, մազմզոտ ու շերտաւոր են:

Այս տեսակ լորենին թէ արագ է զարգանում և թէ առաջինից աւելի երկարակեաց է: Սրա փայտը մանրատերեւ լորենու նման է. սաղարթախիտ լինելու համար պարտէզներում և ծառուղիներում զխաւորապէս այս տեսակիցն են տնկում:

Միջին Եւրոպայում, Դանուբ գետի երկու ափերի երկըրներում, իբրև պարտիզազարդ, աճում է արծաթագոծ լորենի (Tilia argentea, T. tomentosa), որը թէ շատ շուտ է մեծանում և թէ ունի հիանալի վերնամաս. հողմի թեթեւ սոսափիւնից նրա մեծաւուն երկբիւսանի տերեւները ներդաշնակաբար շարժւելով, մօտից անցնողին կամ նրա ստուերում նստողին առանձին հաճոյք են պատճառում. միւս տեսակներից սա աւելի ուշ է ծաղկում. ծաղիկներից շատ անուշ բուրմունք է արձակում իւր շուրջը:

Հիւսիսային Ամերիկայում աճում են գեղատեսիլ լորենիների մի քանի տեսակներ (T. alba Aiton, T. americana, T. pubescens Aiton, T. rubra և այլն):

Խ Մ Ի Ն

ԽՄԻՆ (Дягиль лекарственный, Angelica Archangelica). Հովանաձև ցեղի միամեայ բույս է. բացի առաջոտ տափաստաններից ամեն տեղ էլ լաւ է աճում. սրա մանր ծաղիկները մեղրատու են, բայց աւելի շատ է գործադրում իր բուժիչ յատկութեան հա-



Նկ. № 34

Խ մ Ի Ն

մար սրա մատղաշ տերեւները, իսկ ցողունը ուտում է: Շատ հին ժամանակներից սկսած մինչև այժմ տնային բժշկութեան մէջ (Նորվեգիայում, Լափլանդիայում և ուրիշ ցուրտ երկիրներում) զանազան ցաւերի դէմ շատ է գործադրում: (Նկ. № 34).



Խ Ռ Ն Դ Ա Տ

ԽՐՈՆԳՍՈՒ, ԿԳՆԱԳԻ, ձկան մահարար, տափակլոնձ (Коровякъ, Парскій скипетръ, Verbascum phlamoides L. V. Thapsiforme). Երկամեայ բույս է. ցողունը ուղղահայեացի ու երբեմն մինչև 3 արշին բարձրացող: Տերեւները և ցողունը ծածկուած են մոխրագոյն ու խիտ աղուամազով. դեղնաւուն ծաղիկները խիտ շարքերով բռնած են ցողունի վերին մեծ մասը:

Սա ինքնաբոյս աճում է բարեխառն երկիրների քարքարոտ տեղերում, իսկ մշակելու համար պէտք է ցանել արևաշատ, հոբաւուն և առաջոտ հողերում: Սրա ծաղիկները, բացի մեղրատու լինելուց, գործ են ածում նաև բժշկութեան մէջ: (Նկ. № 35)



Նկ. № 35.

ԽՐՈՆԳՍՈՒ

ա) Ծաղկողից ը) տունից

Այս բույսի հիւթը թմրեցուցիչ թոյն է, մանաւանդ ձկների համար. շատ անգամ ձուկ որսալիս, ուռկան չլինելու դէպքում, սրա ծաղկապատ ցողունները գետաջրի կամ առազանաջրի մէջ ձեծելով ու հօւրը թունաւորելով ձուկ են որսում. ձկները նրա հիւթից թմրելով ջրի երեսն են բարձրանում ու անզգայացած դրութեամբ ջրի հոսանքովն են գնում, որով հեշտ է լինում նրանց որսալը:

ԽՐՈՆԳՍՈՒ տեսակները շատ են, միայն Եւրոպայում և Միջին Ասիայում ճանաչւած են 140 տեսակներ:

Ծ Ո Ր Ե Ն Ի

Ծորենի, շրիշի, զրիշի, կամ կոծոխուր, (Барбарисъ обыкновенный, Berberis vulgaris) բազմացողուն փշալի թուփ է, մանր թթուահամ տերևներով: Դեղին և շատ նեկտարառատ ծաղիկները ողկուղաձև ցած են կախուած. պտուղները երկայնաձև, խիստ կարմիր ու թթուահամ են. ուտուած են հասածը՝ թէ թարմը և թէ կերակրի մէջ, իսկ խակը թթու էլ են դնում՝ ձմեռուայ համար: Սրա հասածը տրորում—վարդագոյն ներկ են ստանում. իսկ կորզախառն ջարդում, մի օրոշ ժամանակ պահելով եռ գալուց յետոյ լաւ օղի են քաշում կամ թէ քացախ են շինում. սրա ար-



Նկ. № 36. Ծորենի,

ա) Տերևոստ, բ) պտուղեղի, գ) մանրածաղիկ.

մատները ձկների համար թոյն է, ինչպէս խոնդատի բոյսը. նրան տրորելով լցնում են ջրի մէջ ու ձուկ որսում: Տերևները ոչխարի և այծի լաւ կեր է: (Նկ. № 36).

Աճում է Անդրկովկասի գրեթէ ամեն տեղերում (մինչև 6000 ոտ. ծ. մ. բարձր.), փայտը ոսկորանման կարծր է նրանից շինում են ճախարակային մանր բաներ:

Ցանկապատի համար շատ յարմար է կծոխուրի թուփը, միայն հացահատիկի արտերից հեռու լինի, որովհետև սրանից արտերը կարող են ծածկել ժանցով և ստանալ սնկային հիւանդութիւններ:

Կ Ա Ղ Ն Ի

Կաղնի (Կղծ, Quercus pedunculat) բարեխառն երկիրների անտառների սեպհական ծառն է սա. լինում է ամառային (Quercus pedunculata) և ամեռային (Quercus sessiliflora) կաղնի. վերջինս առաջինից 2—3 շաբաթով ուշ է ծաղկում, ապահով է գարնան ցրտերից:

Սա աճում է ինչպէս առանձին անտառներով, նոյնպէս և խառն՝ անտառային միւս ծառերի հետ. արգաւանդ ու խոր հողաշերտերում աճած կաղնին լինում է շատ փարթամ, հսկայամարմին, բազմաճիւղ, առողջ և ուղղաբուն. իսկ անոյժ կամ քարքարոտ տեղերում աճածը լինում է վախ, բունը փճուկաւոր կամ խութաւոր, ճղները սակաւ, տերևները մանր ու նոսր: Կաղնին սիրում է շատ լոյս ու արև. թէ և փոքր ժամանակին ուրիշ ծառերի ստուերներում էլ կարող է աճել, բայց այդ դէպքում ձգտում է միշտ դէպի վեր—երկինք որ օր առաջ տեսնի առատ լոյս և պայծառ արև:

Կաղնու վերի մասին որքան նպաստաւոր է բարձրից ստացած լոյսն ու արևը, այնքան էլ օգտակար է իր ստորին մասի և կողքերի ճղներին ստուերում մնալը. այս պայմաններում աճող ծառի բունն ու ճղները կլինեն ուղղահայեաց, առանց խութերի և միշտ առողջ. իսկ ազատ—միայնակ ապրող կաղնու բունը կլինի կարճ, հաստ ու ճղները հորիզոնական դիրքով շատ փուած—տարածւած:

Կաղնին մինչև 60 տարի կարող է բարձրանալ, իսկ այնուհետև սկսում է հաստանալ ու ոստերը տարածել աջ ու ձախ: Կաղնին երկարակեաց է, կարող է ապրել 400—500 տարի. իսկ բարձրութիւնը կարող է հասնել 56—60 արշին:

Սրա պտուղը—կաղինը կամ խոզակաղինը, սկսում է երևալ 30 տարեկան ծառի վրայ. եթէ ծառի շուրջը բաց է, ամեն տարի առատ բերք է տալիս, իսկ եթէ անտառամիջումն է՝ ընդհատաբար է պտղակալում:

Տնկելու համար պէտք է վերցնել միշտ թարմ, բայց լաւ հասած պտուղներ. յաջող է աճում նաև մեծ ծառերի մօտերքում բուսած—արմատակալած ընձիւղներից տնկածները:

Կաղնին ունի իր թշնամիները՝ քանի մատղաշ են—վնասուում են նապաստակներից, իսկ հասակաւորները՝ մի քանի թըրթուրներից. նրանք ենթարկում են նաև սնկային հիւանդութիւնների. իսկ օղի ծայրայեղ փոփոխութիւններից կարող է նրա բունը

ճաքել: Հողի մէջ եղած արմատներն էլ մինչև անգամ ենթակայ են լինում զանազան հիւանդութիւնների. բայց չնայելով վնասատուների այս ամեն հարուածներին, նա կարողանում է երկար դիմանալ ու աճել: (Նկ. № 37).

Հասակաւոր կաղնեու փայտի գոյնը լինում է երեք շերտերով. կենդրոնի մասը՝ թուխ, միջինը՝ քիչ բաց, իսկ կեղևատակինը՝ աւելի բաց. նա շատ ծանր է. ամուր—կայծր, ճկուն, ճլուտ, բայց շուտ ճղւող. սրան գործ են ածում տակառներ, նաւեր,



Նկ. № 37. Կաղնի
ա) Ծաղկատ, բ) Պտղատ.

կառքեր շինելու, երկաթուղու բէլսի տակ դնելու և այլն. խոնաւ տեղերում շինւող տների հիմքը սրա հաստ ցցերի վրայ են դնում, սրանից պատրաստւում են շատ ընտիր ու թանկագին կահ-կարասիք և տնային ուրիշ զարդեր. իսկ սրա գերանը եթէ երկար տարիներով ջրումը մնայ, շատ կը կարծրանայ ու մութ սև գոյն կստանայ. կաղնու կեղևը գործ են ածում կաշւէգործները՝ կաշինեւ տոպագնելու—կաղնիտելու համար:

Սրա պտուղները խոզերի ամենասիրելի կերն է. նրան բովելով սուրճի տեղ էլ են բանեցնում, ունի թէ բուժիչ և թէ աննպարար յատկութիւն:

Կաղնու կեղևն պարունակելով կաղնեթթուտ, գործ է ա-

ծոււմ շատ հիւանդութիւնների դէպքում իբրև դեղ. նրանից պատրաստում են նաև դեկոկտ, որը որնի շատ բուժիչ յատկութիւն մի քանի ցաւերի, ինչպէս մարդկանց, նոյնպէս էլ ընտանի կենդանիների համար:

Կաղնին լինում է շատ տեսակներով. կլիման և հողը տալիս են նրան այլ և այլ յատկութիւններ. կայ զազախաբեր (մանանա) գխտորաբեր (*Quercus infectorius* *), խցանատու կաղնի (*Пробовый дубъ, Quercus suber L.*) և այլն:

Իբրև մեղրատու բոյս ծառայում են ոչ այնքան սրա ծաղիկները, որքան տերևները, որոնք առաւօտները ծածկւում են նեկտարային ցողով ու ժրջան մեղուները լուսածագին ազա-հարար օգտւում են այս բնատուր պաշարից:

Կ Ա Պ Ո Ի Կ

Կապուկ, կապոցիկ, (*Φαιλία, Phacelia congesta Hook. et tanacetifolia Benth.*). պատկանում է *Hydrophyllaceae* ցեղին. սրա հայրենիքը համարւում է Կալիֆորնիան (Հիւս. Ամեր.):

Իբրև մեղրատու սա չունի իր նմանը. խորհուրդ է տրւում, որքան կարելի է, մեղուանոցների մօտ սրան շատ ցանել:



Մի դեռատիւնին բաւական է 3 ֆունտ սերմ. ցանելու է այդքանը 4 անգամ. 1, աշնանը, 2, գարնանը՝ հէնց որ ձիւնը վեր կենայ, 3, սրանից 2 շաբաթ յետոյ և 4; վերջինից դարձեալ 2 շաբաթ յետոյ. այսպիսով մայիսից սկսած ամբողջ ամառայ ընթացքում Ձապցիկան ծաղկած դրութեան մէջ կլինի, քանի որ ցանելուց 2 ամիս յետոյ նա ծաղկում է:

Գիշեր ու ցերեկ մեղուները լիքն են Նկ. № 38 Կապուկ սրա նեկտարաշատ ծաղիկների վրայ. սրանից ստացւած մեղրը լինում է սպիտակ և շատ լաւ որակի: (Նկ. № 38).

*) Տես «Գիւղատնտես» 1910 թ. № 43 էր. 648.

Կ Ա Տ ՈՒ Ա Ղ Ա Ղ Ձ



Նկ. № 39, Կատուաղաղձ

Կ Է Շ Ի.

Կեճի, քղբենի սպիտակ ոգորենի, (Bereza, Betula alba L.) անասնային հանրածանօթ ծառ է, սպիտակ—իւղաշատ կեղևով. սա իր բազմակողմանի յատկութիւններով շատ թանկագին է մարդկանց համար. անուշաբոյր ծաղիկները տալիս են առատ նեկտար. սրա կոկոններից և ծառի հիւթից շինում են իւղ, (Березовая камфора, Oleum betulinum), որ բժշկութեան մէջ շատ է գործադրւում, իսկ ժողովրդական բժշկութեան մէջ, զանազան հիւանդութիւնների համար սրա տիրեններից, կեղևից, ծաղիկներից և մինչև անգամ արմատներից շատ տեսակ դեղեր են պատրաստում:

Կէճու փայտը թեթև է և իւղալի, նա սպիտակ և դիւրաբեկ է, լաւ է կահկարասիքի համար, նոյնպէս էլ լաւ վառելիքայն է: (Նկ. № 40)

Սիրում է սեանոդ—փափուկ տեղեր ու աւելի զով քան թէ. տաք կլիմայ:



Նկ. № 40 Կեճի

Կ ՈՐ Ն Գ Ա Ն.

Կորնգան կամ Իլառույտ, (Թուրք. մարալ—հօնջայ, Эсбарчет, Onobrychis sativa L.) բազմամեայ խոտաբոյս է. ապրում է միևնույն տեղում 10—20 տարի. լինում է սա թէ ինքնաբոյս և թէ մշակովի:

Ծաղիկները թիթեռնիկաձև են ու շատ մեղրատու. մեղուի մի ուժեղ ընտանիք մի օրում սրա ծաղիկներից կարող է մինչև 10 ֆունտ. մեղր պատրաստել: (Նկ. № 41).



Նկ. № 41

Կորնգան

Կորնգանի մշակուածը ամառուայ ընթացքում, հնձում է մի քանի անգամ: Դա լաւ է աճում բարեխառն երկիրներում և մինչև անգամ ծովի մակերևոյթից 10,000 ոտ բարձրութիւններին էլ կարող է դիմանալ և արդիւնաւոր լինել:

Սիրում է կրանոդ, երաշտից չէ վախում:

Կան կորնգանի ինքնաբոյս շատ տեսակներ. նրանք բոլորն էլ թէ լաւ մեղրատու են և թէ ընտանի անասունների համար լաւ կեր են լինում:

Կ Ռ Ա Բ Ա Ն Ջ Ա Ր

Կռաբանջար (Նոտու, խոտուտիկ, կաթնուկ, փամբուղա (О-
дуванчикъ, Leontodon Taraxacum). սա ունի գլանաձև կոճղա-
մատ. մեծ ատամներով տերևները յատակից են դուրս գալիս.
պարզ ու միածաղիկ սնամէջ կոթուններ ունի: Ծաղիկը թափուե-
լուց յետոյ՝ կտիկի վրայ զարդարուն ու տարածուած փետրա-
ւոր պսակները մի գունդ են կազմում, որը թեթև շարժումից
թափուում են գետնին և կամ քամու հոսանքի հետ հեռու տեղեր
են տարածւում ուր և տանում—ցրւում են հասած սերմերը:



Նկ. № 42

Կռաբանջար

ա) Գնդածաղիկ, բ) պտղակալ որի վրայ կայ մի պտուղ, գ) նոյնը ճառագայ-
թածաղիկով, դ) մանրածաղիկը, ե) սերմը իւր փետրով.

Ամբողջ տունկը, մանաւանդ բարձր ցողունները, սպիտակ,
լիզի կաթ ունին:

Կռաբանջարը առատօրէն բուսնում է մարգերի և արօտների
մէջ. բանջարանոցի մէջ սա քաղհանի խոտ է ու դժւարու-
թեամբ է ջնջւում: Մատղաշ տերևները աղցան են լինում: Գրեթէ
ամբողջ ամառը ծաղկում է: (Նկ. № 42)

Այս բոյսը շատ տեսակներով է լինում. ոմանց արմատները
իւրեւ դեղ են գործածում զանազան հիւանդութիւնների դէմ:

Կ Ռ Ա Տ Ո Ւ Կ

Կռատուկ կամ Կոսթնը (Թուրքերէն Դաւա — զարան, Лопухъ,
Lappa tomentosa L.) երկամեայ բարդածաղիկ բոյս է. աճում է
ամեն տեղ. սրա ծաղիկները լաւ մեղրատուներ են համարւում:

Նապոնիայում կռատուկի արմատները կերակրի մէջ էլ են գոր-
ծածում: Ինչպէս գիտական, նոյնպէս էլ տնային բժշկութեան մէջ
սորա արմատը, տերևները և սերմը շատ մեծ դերեր են կատա-
րում. նրանցից պատրաստում են շատ տեսակ դեղեր, որոնցով
շատ հիւանդութիւններ և վտանգաւոր հախրուած վէրքերը բժշկու-
ւում են մեծ յաջողութեամբ: (Նկ. № 43).



Նկ. № 43

Կռատուկ

Կռատուկի արմատը (Radix Bardanae) հարուստ է լորձիւ-
նահիւթով—ինուլինով (մինչև 40%) և ունի դառն-կուպրային
համ. սա շատ քրտնաբեր և արիւն մաքրող յատկութիւն էլ ունի:

Չնայելով սորա բազմատեսակ բարեմասնութիւններին,
կռատուկը ագարակի և մարգերի հախար մշտապար է. նա իւր

լայն տերեւների ստուերում խեղտում է կուրտուրական բոյսերին. իսկ փշալի կօծօծները (պտուղները) կպչում են իրեն մօտից անզգոյշ անցնողի շորերին. բայց եթէ նրանք ոչխարին կպչեն, նրա բուրդը կը փչացնեն. դրա համար էլ աշխատում են մարդերը ազատ պահել նրանից՝ շարունակ մաքրելով և սրմատահան անելով:

Հ Ա Լ Ա Մ Ո Ւ Կ

Հալածուկ վայրի, (Сурепица, желтоцветъ пахучій, Barbarea vulgaris). միամեայ, դեղնաոսկեգոյն ծաղկով, անուշաբոյր հոտով խաչածաղկի ցեղին պատկանող բոյս է: Ծաղկում է ապրիլից — օգոստոս. աճում է ամեն տեսակ հողում ու ամեն տեսակ ժանգալ խոտերի հետ:

Լնդացաւի (ցինգ) լաւ դեղ է: Թացաւուն տեղերում աճածը նեկտարաշատ է, տալիս է առատ մեղր, որը լինում է դեղնականաչ գոյնով և շատ անուշ հոտով, միայն սրա մեղրը երկար չէ կարող դիմանալ:

Մարգերի և արտերի ցանքսի համար սա ժանգալ խոտ է, պէտք է միշտ քաղհանել: (Նկ. № 44)



Նկ. № 44

Հալածուկ



Հ Ա Ղ Ա Ր Զ

Հաղարջ կարմիր եւ սեւ (Черная и красная Смородина, Ribes rubrum et nigrum L.) հանրածանօթ հաղարջի թուփերն են. սրանց ծաղկի նեկտարը թէ և սակաւ է, բայց այնու ամենայն օգտակար է, որովհետեւ ուշ է ծաղկում. ունի առատ ծաղկափոշի և մեղրացող:



Նկ. № 45

Հաղարջ

ա) Ծաղկոստը, բ) պտղեցողը:

Պտուղը ունենալով խնձորի և լիմոնի թթւումներ, ուտելու ախորժառն է թէ հումը և թէ շաքարով եփածը:

Սրա փշոտ և բազմացողուն թուփը կարող է պարտիզի կամ ազարակի լաւ ցանկապատ դառնալ:

Կարմիր հաղարջը յաջող է աճում փափուկ, բիչ թացաւուն ու կիսակաւային հողերում. սիրում է շատ լոյս և արև:

Հաղարջի պտուղը լինում է կարմիր, վարդագոյն, սպիտակ և դեղնաւուն շերտաւոր գոյներով. ամենի յատկութիւնը և բնոյթը մէկ է:

Հ Ա Մ Ա Ս Պ Ր Ա Մ

Համապարամ (Смолка, *Lychnis viscaria* L.). ամանք թէև ընդունում են սրան իբրև լաւ մեղրատու, բայց սրան բաղմացնում են իբրև բուժիչ յատկութիւն ունեցող բոյս:

Տնային բժշկութեան մէջ սրա արմատները խաշում և շաքարացաւի ամորձիկային կամ միզարդելութեան ցաւերի դէպքում գլխաւորապէս հիւանդի սեռական անդամի վրայ են կապում տաք-տաք:



Նկ. № 46.
Համապարամ

Պտուղն ու ծաղիկները քաղցրահամ են. երեխայքը միշտ քաղում են նրանց ու ծծում:

Համապարամի առասկները շատ են. գրեթէ բոլորն էլ լաւ մեղրատուներ են:

Մարգերի համար ժանդալ խոտ է համարւում, որով քաղհանւում է միշտ (Նկ. № 46)

Հ Ա Պ Ա Լ Ա Ս Ի Վ

Հապալասի—մրտենական (Черника, *Vaccinium Myrtillus* L.) Ներդրւում սա ցածրիկ թուփ է, իսկ Կովկասում—աւելի բարձրաւուն է. առատութեամբ աճում է սարալանջերում և ձորակներում:

Սորա կանաչաւուն փոքրիկ ծաղիկները բաւական նեկտարաշատ են. մեղուի մի ուժեղ ընտանիք կարող է սրանցից օրը 6 ֆունտ մեղր պատրաստել:



Նկ. № 47
Հապալասի մրտենական

Հապալասու պտուղը հասնում է յուլիս—օգոստոսին. նրանք փոքրիկ, կլոր և սեւագոյն են՝ ծածկուած կապտաւուն խաւով. համը տախպ է, ունի բուժիչ յատկութիւն. թարմը ուտւում է—երբ լաւ է հասած լինում, բայց ըստ մեծի մասին չորացնում ու նրանից պատրաստած կերակուրը, իբրև դեղ, տալիս են փորլուծ ունեցողներին, իսկ պտղահիւթից մի քանի հիւանդութիւնների դէմ դեղեր են պատրաստում:

Տերկները և մատղաշ ընծիւղները գործադրում են կաշի կաղնիտելու համար: (Նկ. № 47).

Ճ Ա Ն Կ Խ Ռ Տ

Ճանկխոտ կամ Ծծուկ (Живучка ползучая կամ дубница, Ajuga reptans). պատկանում է եղնջամայրի տեսակին: Ծլարմատ-



Նկ. 48

Ճանկխոտ կամ ծծուկ

ներով շատացող ու տարածող է. տերևները՝ թիականման ու ձուլած, ծաղիկները՝ ծիրանագոյն, սիրում է աւելի թացաւուն ու խոնաւ տեղեր, աճում է խրմբովին, բայց երբ արոտամարդը կամ արտը, ուր նա բուսած է, լաւ հերկէի—մշակուի, նա ոչնչանում է:

Ինչպէս Ծծուկը նոյնպէս էլ սրա բոլոր տեսակները լաւ մեղրատուներ են: (Նկ. № 48)



Ճ Ո Ի Շ

Ճուր կամ ճագոմ և կամ մղամուկ (Омела, Viscum album). առ թէ և մակարոյծ է, բայց բանի ունի երկարատե սպիտակ



Նկ. 49

Ճուր կամ ճագոմ

ծաղիկներ, մեղուները կարողանում են շատ երկար ժամանակ նրա ծաղիկների նեկտարից և ծաղկափոշուց:

Մ Ա Մ Խ Ի Վ

Մամխի, լկրտինի, մամուխ կամ փշալին սալորի. (Терёнь, Prunus spinosa). բազմաճիւղ և փշոտ թուփ է. տերևները մանր, նիզակաձև և եզերքը առամասուր. ծաղիկները՝ սպիտակ ու մանր, լինում են նրանք առանձին կամ երկ-երկու, սրանք տերևներից առաջ են բացւում, անուշահոտ են և նեկտարաշատ: Կորիզապուղը (մամուխը) կլոր, ծածկուած է կապոյտ խաւով, թթու և տափահամ ունի:

Այս թուփը առհասարակ բուսնում է քարքարոտ տեղեր և հանապարհների եզերքներին: Փայտը կարծր է, ճախարակազուր- ծութեան մէջ պէտք է գալիս:



Նկ. № 50

Մամխի.

ա) Ծաղկոտ, բ) պտղոտ.

Ծաղիկները իրեն թէյ են բանեցնում. պտուղը շատ թթուա- համ լինելով ուտելու համար կամ պէտք է եփել և կամ թէ թու- նել ծառի վրայ այնքան, որ ցրտահար լինի: (Նկ. № 50)

Մամուխը գինին կարմիր ներկելու համար էլ է գործածւում:

Մ Ա Ն Ա Ն Ե Ս

Մանանեխ սպիտակ—խարպալ (Бѣлая или англійская гор- чича, Sinapis alba L.). խաչածաղիկ ցեղին պատկանող միամեայ բոյս է, 7—12 վերջով բարձրութեամբ. տերևները՝ նոսր, կոշտ ու կարատուած եզերքով, ծաղիկը՝ դեղին:

Լինում է թէ ինքնաբոյս և թէ մշակուող: Ինքնաբոյս մանա- նիսը շատ տեսակներով է: Բոյսը հիւթալի. սորա չորը ընտանի ա-

նասունի համար լաւ կեր է, բայց յարգի հետ քիչ-քիչ խառն պէտք է տալ:

Հունդը ունի 30—35% ճարպային և եթերեան իւղ, որը գործադրւում է թէ կերակրի մէջ և թէ իրր ճրագալոյս:

Հունդը մանր աղալով ստացւում է դեղնագոյն նուրբ ալիւր, սրան քացախի, քիչ շաքարի և ջրի հետ շաղախելով պատրաստում են կերակրի համեմիք:



Նկ. № 51

Մանանեխ սպիտակ

Մանանեխի բոյսը լինում է շատ տեսակներով. նրանցից ար- դիւնաւորներն են՝ սպիտակ և սև տեսակները:

Մանանեխի փոշին ունի նաև բուժիչ յատկութիւն, միայն թէ գործ է ածւելու նա սնայական բժշկի ցուցմունքով և խորհուրդով:

Սպիտակ մանանեխի ծաղիկը ամենաընտիր մեղրատուներից մէկն է. սրանից ստացած մեղրը թէ և մոթ—դեղնագոյն է, բայց ունի անուշաբոյր հոտ և դուրե- կան համ:

Մանանեխը ընդմիջումներով ցանկւով մինչև ցրտերի ընկնելը ծաղիկ կլինի ու մեղուներին պէտք պաշար շարունակ կըճարուի:

Սրա արտը եթէ ծաղկելուց առաջ կամ մինչև պտղակալելը հնձուի, անասունների համար շատ սննդաբար կեր կլինի:

Թարմ թուփի բաղադրիչ մասերն են՝ 14% չոր նիւթեր, 2, 5% պրօտային, 0, 5 ճարպ, 4, 1% ցանցառիւթեր, 5, 3% անա- դօտային մղուկներ, 1, 6% մոխիր, իսկ մնացեալը ջուր. ջրի և պրօտայինի շատութեան համար անասուններին կեր տալիս պէտք է յարգախառն տալ: (Նկ. № 51).



Մ Ո Ր Ե Ն Ի

Մորենի Ազնիւ կամ Արքայամորենի, (Малина, Rubus Idaeus, Թուրք. մորու). պատկանում է Rosaceae ընտանիքի Rubus ցեղին: Սա բազմամեայ թուփ է. լաւ է աճում բարեխառն երկիրների արեազէմ ձորակողերում, անտառների փեշերում և կտրուած անտառատեղերում՝ ծովի մակերևոյթից 3000—6000 ոտ բարձրութիւնների վրայ:



Նկ. № 52

Մորենի ազնիւ

ա) Պտղոս, բ) Ծաղկոս, գ) Տերև,

Սրա ծաղիկը տալիս է շատ ընտիր նեկտար և առատ ծաղկափոշի: (Նկ. № 52)

Աճում է թէ ինքնաբոյս և թէ մշակութեամբ, Սա յարգի է իւր անուշահոտ և ախորժահամ պտուղների համար. ուտում է ինչպէս թարմը, նոյնպէս և պատրաստում է քաղցրաւենի. իսկ չորացրածը ունի բուժիչ յատկութիւն (լաւ քրտնաբեր է):



Մ Ո Ր Ե Ն Ի

Մաշի կամ հասարակ մորենի և կամ մարմենի (Ежевика, Rubus fruticosus L.) բազմամեայ փշոտ թուփ է. մեղ մօտ ինքնաբոյս աճում է առուների եզերքներում, ցանկապատերի և այգիների պատերի մօտ. լինում է շատ տեսակներով. հեազհետէ սրա թէ պտուղը և թէ փշաթուփը տնտեսութեան մէջ ընդարձակ գործառնութեան մէջ է մտնում, որով պահանջը շատանալով, սկսում են առանձին խնամքով մշակել ինչպէս Եւրոպայում, նոյնպէս էլ Ամերիկայում:



Նկ. № 53. Մորենի հասարակ,

ա) Ծաղկոս, բ) Տերև, գ) հասած պտուղը:

սրա սպիտակ ծաղիկները, սկսած վաղ դարձանից, մինչև աշուն իւր թուփի վրայ շարունակաբար լինելով, շատ նպաստաւոր են մեղաբոյծերի համար: (Նկ. № 53).

Հասած պտուղները ուտում են թարմ ժամանակը, նրանցից պատրաստում են նոյնպէս քաղցրաւենի, գինի, օղի, քացախ և այլն. իսկ խիստ փշոտ թուփը ծառայում է իբր հիանալի ցանկանիւթ՝ պարտեզների և ագարակների շուրջը տնկելու համար. սրան բազմացնում են կամ չոփերը և կամ արմատակալած ընձիւղները տնկելով:

Յ Ա Փ Ո Ի Կ

Յափուկ հոտաւետ (Резеда, Reseda odorata L.) թէև սրա հայրենիքը համարում է Միջերկրական ծովի եզրաշուրջը եղած



Նկ. № 54

Յափուկ հոտաւետ

երկիրները, բայց այժմ այլ ևս այն տեղերում նրա վայրի տեսակը չկայ: Եւրոպայում յափուկը մշակում է շատ մեծ քանակութեամբ:

Յափուկը ցածրադիր, միամեայ բույս է, հարթ, քիչ աղւամազով ծածկած բազմաոտ ցողունով. տերևները քիչ երկարաւուն, երբեմն երբեք կտրատւած. դեղնաւուն խիստ անուշաբոյր ծաղիկները պատած են ուտերի ծաղիկները: Մանր սերմերը լինում են փոքրիկ պարկերի մէջ:

Թեթև ու արգաւանդ հողերում մշակուած յափուկը ունենում է շատ սուր և անուշ հոտ, որքան նա շուտ ցանւի, այնքան լաւ, որովհետև 3—4 ամիս շարունակ կարելի է կտնի նրա ծաղիկները ունենալ: (Նկ. № 54)

Մի դեռատինի վրայ կարելի է ցանել 5—8 ֆ. սերմ. իսկ ծլելուց քիչ յետոյ պէտք է թէ քաղհանքը անել և թէ բոյսը նոսրացնել, այնպէս որ մէկը միւսից 3—4 վերջոյ հեռու մնայ: Բացւած ծաղիկները պէտք է ժողովել ամեն օր առաւօտները, ցողը անցնելուց յետոյ, բացառապէս միայն արևոտ և չոր օրերին: Ժողոված ծաղիկները անմիջապէս ուղարկում են գործարանները, ուր հանում են նրանցից եթերային իւլ:

Մի դեռատինից ստացւում է մինչև 130 փ. ծաղիկ:

Ցանելու համար պէտք է ընտրել բոլորովին չհասած պղտղապարկեր, որովհետև շատ հասած սերմերի պարկերը չորանալով կարող են ճաքճաքուիլ ու մանրահատիկ սերմերը թափւել:

Սերում է փափուկ հող. լաւ է ցանել մարգերում, մանաւանդ թմրիկների վրայ:

Շ Ա Բ Դ Ա Ր

Շաբդար (Шадарь, Trifolium resupinatum L.) բազմամեայ լոբիածաղիկ բույս է. սա աւելում է նաև պարսկական առույտ, լինում է թէ ինքնաբոյս և թէ մշակովի, որը առույտի նման հնձւում է ամառը մի քանի անգամ:

Բազմաթիւ ծաղիկները լի են անուշաբոյր նեկտարով. սրանցից արտադրւած մեղրը լինում է շատ աղնիւ տեսակի: Առույտի նման կարելի է սրա ծաղիկներից օգտւել գարնան սկզբից մինչև շատ ուշ աշունը, եթէ միայն մեղուապահը ունենալ սրանից մի քանի արտեր և յաջորդաբար հնձելու լինի նրանց:

Եղջիւրաւոր անասունների համար շաբդարի թէ թարմը և թէ չորացրածը ախորժաճամ և սննդարար կեր է:

ՇԱԳԱՆԱԿՆԻ ԸՆՏԱՆԻ ✓



Նկ. № 55 Շագանակենի

ա) Փոշիկատուկ, (Ա. մէկը մեծացրած). բ) Կնքածաղիկ, (Բ. մէկը մեծացրած). գ) Գտուղը (Շագանակ և հատիկը), ի) Տերևոտ.

Շագանակենի ընտանի (Каштань, Castanea vesca). պատկանում է սրաքիթ (cupuliferae) ցեղին. (Նկ. № 55). յաջող

աճում է աւելի մեղմ և տաք կլիմայ ունեցող երկիրներում: Փնջալի ծաղիկները լաւ մեղրատու են. պտուղը ուտելու է գործադրում, իսկ կարծր փայտը բաւական թանգ է ու գործադրում է շինութիւնների համար. լաւ դիմանում է խոնաւ երկիրներում:

Յաջող աճում է Արեւմտեան Կովկասի արգաւանդ հողերում, մինչև 5—6 հազար ոտ ծ. մ. բարձրութիւններում. իսկ Արեւելեան Կովկասում շատ կայ Դարաբաղում, Թալիշում և Զաքաթալի շրջակայքում:

Սրա տերեւներով և կեղևով կաղնիտում են կաշեղէն, շինում են սև ներկեր և թանաք:

Ծառը կարող է հասնել մինչև 100 ոտ բարձրութեան. փայտը կարծր, բայց համեմատաբար թեթեւ է (տեսակարար կշիռն է 0,66). խոնաւոտ տեղերում շինութիւնների համար յարմար է, որովհետև չի փթում և որդնակեր չի լինում:

ՇԱԳԱՆԱԿԵՆԻ ՎԱՅՐԻ Կ



Նկ. № 56 Շագանակենի վայրի.

ա) Ծաղիկոտ, բ) Պտուղը, գ) Սերմ, դ) Նոյնի միջուկը:

Շագանակենի վայրի, (Конский каштанъ, Hippocastanus L.) գեղատեսիլ մեծատերեւ ծառ է. (Նկ. № 56). առատութեամբ աճում

է վայրի դրութեամբ Յունաստանում և նրա շրջակայ գաւառներում. ծաղիկները փնջաձև են ու մեղրաշատ. փշոտ կեղևի մէջ գտնւում է նրա պտուղը, որը ուտելու անպէտք է. նրա սաղարթախիտ ծառը տնկում են փողոցների և ծառուղիների հզերքներում՝ իրրև գեղատեսիլ և ստուերատու բոյս:

Շ Ա Ն Ծ Ո Թ Ր Ի Ն

Շան ծոթիկնը կամ հոտիսոյ եւ կամ մեղրածուծ (Шандра-мята, Marrubium vulgare L.) պատկանում է չրթնածաղիկների ցեղին, բազմամեայ բոյս է. յաջողութեամբ է աճում ամբողջ Կովկասում սիրում է արգաւանդ, թեթեւ ու չոր հող և բաց դիրք ունեցող տեղ: Ծաղկում է յունիսից—հոկտեմբեր, որով և կարողանում է երկար ժամանակ տալ իրեն դիմող մեղուներին առատ բերք:

Մեղրաբոյծերը սրան լաւ են ճանաչում և աշխատում են քաղմացնել դորա բոյսը իրենց մեղուանոցների շուրջը. սրա կամ սերմն են ցանում և կամ թէ թփի հնացած արմատները բաժանում ու տնկոտում:

Շան ծոթիկնի տերեւները և ցողունի գլխի ծաղիկները բժշկութեան մէջ գործ են ածում զանազան ցաւերի դէմ:



Նկ. № 57

Շան ծոթիկն



Ո Ւ Ռ Ե Ն Ր

Ուռնեխի, (Ива, Salix). սրանք լինում են թէ ծառեր և թէ թփեր. պատկանում են բոլորը Saliceae ընտանիքին. սրա բոլոր տեսակներն էլ երկտուն ծաղկով ծառեր են, աճում են թէ պարտեզներում և թէ վայրենի դրուժեամբ. դիմանում են ցրտի ու ինքնարոյս տարածւած են մինչև 60° հիւս. լայնութեան տակ:

Սա շատ տեսակներով է լինում և այս խառնուրդը առաջանում է նրանից, որ արու և էգ ծաղիկները լինում են առանձին ծառերի վրայ, իսկ բեղմնաւորող փոշիները միջատների կամ



Նկ. № 58 Այծառուի (փփ-փփ)

քամիների միջոցով իրար հանդիպելով տեսակները փոփոխւում են, որից և ծառի փայտի տեխնիկական յատկութիւնն էլ կերպարանափոխւում է: Հաշւած են մինչև 800 տեսակ ուռնեխ. ով ուղենայ իւր կալւածում ուռնեխ տնկել, նախ պէտք է որոշի թէ ինչ նպատակի է նա ծառայելու ապագայում, ու ըստ այնմ գտնի և տնկի իւր ուղած տեսակը:

Ուռնեխ բոլոր տեսակները բաղմացնելու համար տնկում են ծառից կտրւած թարմ ստերը: Սիրում է խոնաւ և թաց հող:

Շատ տեսակներից յիշենք միայն այն ուռնեխները, որոնք անտեսութեան մէջ որ և է նշանակութիւն ունեն:

Իւրաքեղ ուռի (Равица, Salix fragilis), փայտը գիւրաբեկ, տերեւները նեղ ու երկայն, աւելի թուփ է քան թէ ծառ:

Սպիտակ ուռնեխ, (Берба, Salix alba). սա մեծ ծառ է դառնում. ունի շատ տեսակներ. փայտը ձկուն է, յարմար է աղիղների (дуга) և կամ անիւի շրջանակներ շինելու համար:

Ճիլուռ (Salix vittelina) սա վերը յիշած տեսակների խառնուրդ է. առուների եզերքներում են տնկւում, արձակում են երկայն ու ձկուն ստեր, որոնք գործ են ածւում գլխաւորապէս խողովի վազերը ցցերին կապելու և անտեսական այլ այսպիսի պիտոյքների համար:

Այծառուի փշի-փշի (Бредина, Salix Caprea), սրա տերեւները ձուլաձև ու խոշոր են. ծաղիկները դեղնագոյն ու շատ մեղրատու, կանոնաւոր ու մեծ մեղանոցների շուրջը շատ ձեռնառու է սրանց տնկոտել. ծաղկակոկոնները երեւում ու բացւում են շատ վաղ գարնանը, նրանք երկարաւուն են ու ծածկւած խիտ աղւաժաղով: Ատրպատականում (Արեւմտ. Պարսկաստան) այս կոկոնները ժողովում ու օղի են քաշում, որը խմացնում են արեան պակասութիւն ունեցող հիւանդներին: (Նկ. № 58).

Սրա նման է Սողոզ ուռի, (Ушастия ива, Salix aurita) միայն տերեւները առաջինից աւելի փոքր են. այս երկու տեսակների ծառի կեղեւները կաղնիտային յատկութիւն ունենալով կաշիները կաղնիտելու համար են գործածւում:

Իեղնափայտ ուռի, (Желтолозникъ, Salix purpurea) աճում է թփաձև, ստերը ձկուն են ու բարակ, գործադրւում են նուրբ զամբիւղներ և ուրիշ մանր բաներ գործելու համար:

Նշատերեւ ուռի, (Вьлотаъ, Salix amygdalis) լաւ է աճում թացաւուն տեղերում. բայց շատ ցրտի չի դիմանում. սրա փայտը ձկուն է, բարակ ստերից գործում են աւելի պինդ ու կոշտ առարկաներ:

Ճանճառուեխի, (Ворболовъ, Salix viminalis). սա թուփ է, 1—1½ մետր հազիւ է բարձրանում. կողովագործութեան համար սա ամենից շատ տարածւած և ընդունուածն է, լաւ է աճում մշտախոնաւ տեղերում:

Վարսառու կամ Սլաւոր ուռի, (Ива плакучая, Salix babylonica), սրան ասում են նաև Երուսաղեմի կամ Լալկան ուռնեխ. հայրենիքը համարւում է Արեւմտ. Ասիան, Թուրքեստանը և

եապօնիան. սա բնի վերամասից կախ ընկած արձակում է իւր շուրջը բարակ ու երկայն ոստեր:

Այս ուռնին շատ է տնկում գերեզմանների շուրջը: Տերեւները նեղ են ու երկայն:

Թէև ուռննու բոլոր տեսակների ծաղիկները շատ ընտիր մեղրատուներ են, բայց մենք հատրնտիր անելով յիշեցինք միայն ամենագլխաւորները, կցելով տնտեսութեան մէջ, բացի մեղրատու լինելուց, նաև ուրիշ յատկութիւն ունեցող տեսակները: Իսկ մեղրատու ուռնիք ետ ու առաջ ծաղկելով, մեղուների սննդապաշարը շատ երկար ժամանակ ապահովուած է լինում:

Կալւածատէրը երբէք պէտք չէ հրապուրուի ուռննու շատ տեսակներով. նա տնկելու է միայն 2—3 տեսակը. այն էլ որոշելու է թէ ի՞նչ նպատակի համար է ծառայելու և ըստ այնմ էլ տեսակը ընտրի:

Ո Ւ Ր Յ

Ուրց (Вородекая трава, Thymus Serpyllum). բարձր կիսաթուփ է. մի արմատի վրայ բազմաթիւ ցողուններով. տերեւները հաւելթածն են ու կարճ կոթի վրայ. վարդակարմիր ծաղիկները լինում են փունջփունջ ու կազմում են մի տեսակ օղակ:



Նկ. № 59 Ուրց

ընդ հաւելթածն են ու կարճ կոթի վրայ. վարդակարմիր ծաղիկները լինում են փունջփունջ ու կազմում են մի տեսակ օղակ:

Ամբողջ տունկը մաղ-մզոտ է և ունի սուր հոտ. տերեւները՝ թէ թարմը և թէ չորացրածը, գործ են ածւում իբրեւ համեմիք, իսկ թուփը և արմատները իբրեւ դեղ՝ զանազան հիւանդութիւնների դէմ:

Բուսնում է չորաւուն սարալանջերում և քարքարոտ տափաստաններում:

Ծաղկում է յունիսից—սեպտեմբեր: (Նկ. № 59).

Պ Ա Տ Կ Ա Ռ Ռ Ի Կ

Պատկառուկ (Мимоза, Mimosa pudica). սա օտաբերկրայ ծառ է. թէ և պատկանում է թիթեռնածաղիկների կարգին, բայց



Նկ. № 60

Պատկառուկ

նրանցից զանազանում է փակ բաժակովը և կանոնաւոր՝ երբեմն միացեալ, փոշիատերևներով. գրեթէ ամբողջ ամառը, մինչև աշնան սկզբները, հետզհետէ ծաղկում է. իսկ ծաղիկները նեկտա-

ըստատ լինելով, միշտ ծածկուած են լինում անթիւ մեղուներով:

Պատկառուի մի զարմանալի յատկութիւնն էլ այն է, որ շատ զբաղուն է. բաւական է տերեւանկեան մօտ մի փոքրիկ շոշափումն կամ շարժումն առաջ բերել, կարծես տունը պատկառում է ու անմիջապէս տերեւները ցած են կախում. այդ իսկ պատճառով էլ անւանել են նրան Պատկառուի: (Նկ. № 60).

Ս Ե Ի Ա Ն Ի Վ

Սեւանի (Черёхша, Prunus Padus Dc.) ոսկրակոբիղ տեսակի ծառերիցն է. ծաղկում է ապրիլին, տալիս է առատ նեկտար, ծաղկափռի և մեղրացող: (Նկ. № 61).



Նկ. № 61 Սեւանի

Իւր մէջ պարունակող քիմիական բաղադրութիւններէ (ամիդ-դալին, կադնիտային նիւթեր և այլն) շնորհիւ ունի բուժիչ յատկութիւն էլ:

Սրա սերմից ստացւում է դառն նուշի իւղի նման իւղ:

Վ Ի Կ Ն

Վիկն, ոլոն, դոն (Вика обильноцветная, Vicia sativa L.). լորիացեղ ծաղկով խոտաբոյս է. լաւ է աճում ցուրտ և խոնաւոտ տեղերում. լինում է ինքնաբոյս և մշակովի. ցանում է թէ առանձին և թէ խառն դանազան հացաբոյսերի հետ. դուռ վիկն ցանածը անասունի լաւ կեր է հէնց կանաչ ժամանակն էլ. սրան



Նկ. № 62

Վ. Ի. Կ. Ն

ա) Տունկը, բ) Մանրածաղիկը, գ) փոշանոթ, դ) պատիճը:

ցանում են շատ անգամ հողը պարարտացնելու համար, այն է՝ երբ դրա ցանքը ծաղկելուն է մօտենում, արտը վարում են ու բոյսը հողի հետ խառնելով հողին պարարտացնում է:

Ծաղիկները փոքր, բայց նեկտարաշատ են: (Նկ. № 62)



Տ Ա Տ Ա Ս Կ Ա Փ Ո Ի Շ

Տատասկափուշ, սեղտափուշ, սրգ, կածուկ, իծագլուխ, կանգար (Чертополохъ, Carduus nutans L.). երկամեայ բարդածաղիկ բոյս է, 1½ արշին բարձրութեամբ: Սրա նեկտարաշատ ծաղիկներից ստացւած մեղրը լինում է սպիտակ ու շատ ախորժահամ:

Տատասկափուշի յատկութիւնները ունին նաև մի քանի փըշաբոյսեր:



Նկ. 63

Տատասկափուշ

Այս բոյսը լաւ մեղրապաշար տւող է գլխաւորապէս այն պատճառով, որ յունիսից մինչև ուշ աշունք ծաղիկ է ունենում, որով մեղուները բաւական երկար ժամանակ կարողանում են նրանցից օգտուի:

Գիւղերում սրա մատղաշ ցողունների կեղևը կլպում—ուտում են, ուտում են նաև պողի կոճակները, նախապէս փշերը մաքրելով:

Այս ծաղկազլիներից ժողովրդական բժիշկները ջերմ ու տենդի դեղ են պատրաստում: (Նկ. № 63)

Ինչպէս վերը յիշեցինք կածուկը (Carduus acanthoides), պատկանում է տատասկափուշերի ցեղին. նա նոյնպէս երկամեայ բոյս է. ցողունը փետրաւոր և փշոտ. երկայն ու փետրաւոր տերևներն էլ փշոտ են. ամեն մի ոստի գլխին լինում է մի մի կարմիր գնդածաղիկ, որը կազմած է բոլորը խողովակաձև մանրածաղիկներից:

Պողակալը թեփոտ է:

Սրա բոյսը աճում է անխտիր ամեն տեղ՝ ճանապարհների կողերին, արտերի մէջ, ցանկապատերի մօտ և այլն: Ծաղկում է յունիսից—սեպտեմբեր:

Կածուկի շատ տեսակներն են լինում. բոլորն էլ լաւ մեղրաբերը տւողներ են:

Սրա ցեղին է պատկանում նաև ուտելու կանգարը կամ Արտիսոք (Артишокъ, Cynara Scolimus), կռատուկը (Лопухъ обыкновенъ, Lappa vulgaris), Անցողուն վարազափուշը (Carlina acaulis), Փնջոտ կռատուկը (Лопухъ, Lappa tomentosa) (Տես Կռատուկ, երես 53) և այլն. վերջինի ծաղիկները ծիրանագոյն են:

Կածուկի մի քանի տեսակների ծաղիկներից դեղին և կարմիր ներկեր են պատրաստում—բրդի և մետաքսի գործւածքներ ներկում, պատրաստում են նոյնպէս շաքար:

Յ Ա. Խ Ի


Յախի, ցախաւի, խալանջ (Вережа, *Calluna vulgaris*)
 ձգներաւոր մշտադալար թուփ է, մանրիկ տերեւներով և կար-
 միր ծաղիկներով — մինչև 1 ար-
 շին բարձրութեամբ. նրա տաճ
 մեղրի մեծ քանակին նայած կարե-
 լի կլինէր սրան դասել լաւ մեղրա-
 տունների շարքում, բայց որակի կող-
 մից անպէտք է. սրա ծաղիկներից սը-
 տացած մեղրը մթնագոյն է ու տըտ-
 պահամ. բացի սրանից, Յախամեղրը շուտ
 շաքարակալելով բիւրեղանում է, ան-
 յարմար է նրանով ձմեռը մեղուններին
 կերակրել. մեղունները սրա թուփից օգ-
 տւում են մինչև աշնան ցրտերի ընկ-
 նելը: Սրա մեղրը գործ է ածւում
 շաքարախտի (քար ունեցողի) դէմ, իսկ
 ամբողջ թուփը գործ է ածւում կա-

շուէ գործարաններում—կաշի տապալեցնելու (կաշնիտելու) և նրանց
 դեղին գոյնի ներկելու համար:

Բուսնում է չորաւուն և քարքարոտ տեղերում. լինում է
 շատ տեսակներով:




Նկ. № 64
 Յախի



ՓՇԱՀԱՂԱՐՉ

Փշանդարը (*Рыжовник, Ribes Grossularia L.*) պատկանում
 է Ribesiaceae ընտանիքին. բազմամեայ թուփ է. աճում է աւելի դուր
 տեղերի անտառափեղերում. թէ և ինքնաբոյս է, բայց շատ է
 մշակւում է թէ պտղի և թէ պարտիզի զարդի համար: Սրա ծա-



Նկ. № 65
 Փշանդարբեր
 ա) Պտղոստ, բ) Մարկոստ, գ) Պտուղը:

ղիկները տալիս են առատ և բնտիր սրակի նեկտար և ծաղկափոշի:
 Պտուղը ուտւում է թէ հում և թէ շաքարում եփածը.
 տեղ տեղ սրանից պատրաստում են զինի, օգի և այլն:

Տնային բժշկութեան մէջ սրա տերեւներից թոքախտի դեղ
 են պատրաստում:



ՖԻՐՄԱՆ ԶԱՆՍԶԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵԱԱԿԱՆ

և արդիւնաբերական ցուցանանքէսներում՝ Կով-
կասում և Ռուսաստանում
ՊԱՐԳԵՒԱՏՐԻԱԾ է 15 հատ բրոնզեայ, արծա-
թեայ և ոսկեայ մեդալներով:

Կ. Թ. ԱՖՐԻԿԵԱՆԻ



Այգերուծական տնտեսու-
թիւնը առաջարկում է խըն-
ձորենիքի, տանձենիքի, դեղ-
ձի, ծիւանու, կեռասնու,
տալոքնու, և այլ պտուղների
1 և 2 տարեկան ծառեր՝ ար-
տասանմանեան ամենաընտիր
տեսակներից, պատւաստւած
վայրի տունկերի վրայ և թը-
զուկ (կարճահասակ) ծառեր:
Պատէրը ուղարկել տըն-
կելուց գոնեա մի ամիս
առաջ:
ԾԱՌԵՐԻ ՅՈՒՑԱԿԸ ՈՒՂԱՐ-
ԿԻՈՒՄ է ՁՐԻ

Դիմել՝ Գորի Կ. Թ. Աֆրիկեանին.

Гори, Садоводство К. Ө. Африкяна.

Կամ Тифлисъ, Редакція „Гюхатнтесь“

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՄԵՂՐԱՏՈՒ ԲՈՅՍԵՐԻ ՄԱՍԻՆ

Глаголевъ, Указатель при выборѣ медон. растеній.

Гондати, Медон. и вредн. для пчелъ растенія.

Ангелко, Медонос. растенія.

Фрикъ, Списокъ медон. растеній.

Потъхинъ, Справ. Книжка пчеловода.

Paradiesъ, Пчеловодн. Атласъ.

Altfeld, Die Bienen—Flora.

Huck, Unsere Honig—u. Bienenpflanzen.

Աւելորդ Համարեցինք դնել նաև մեղրացուի մասին եղած
գրածքներից երկու հեղինակաւոր հետազոտողների անունները՝
այն է՝

BUGEN, Der Honigthau. և BORNIER, Recherches expe-
rimentales sur la miellée, որ ապւում է Revue generale de
Botanique. V, և VIII գրքերում:



Յ Ա Ն Կ

Հ Ա Յ Ե Ր Է Ն Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր Ի

Երև

Երև

Ակացիա դեղին	15	Կէճի	50
» սպիտակ	16	Կորնդան	51
Աղբաղբուկ	17	Կոստանշար կամ կաթնուկ	52
» ուտելու	17	Կոստուկ կամ Կոթնը	53
Այծատերև	18	Հալածուկ վայրի	54
Անծնի ճահճային	»	Հաղարջ	55
Ապուզան նրբատերև	19	Համասպրամ	56
Առիւծագի	20	Հապալափ	57
Առույտ	21	Հանկիտու կամ ծծուկ	58
Արինջ կամ հնդկացորեն	22	Հուշ կամ ճագոմ	59
Բեկտենի	23	Մամխի	»
Բոնչի	24	Մանանիթ սպիտակ	60
Գայլուկ	25	Մեղրենիի պաշարը	1
Գոնդեղ	26	Մեղրացորդ	11
Ելագ	27	Մոշի	63
Եղեսպակ	28	Մորենի աղի	62
Եղերդ	29	Յափուկ	64
Եղնճամայր	30	Յունական առույտ	21
Երեքուկներ	31	Շաբղար	65
Ընտնի կաղնի	33	Շագանակենի ուտելու	»
Թթենի	34	» վայրի	66
Թղի կամ Պէխի կամ Բժղի	36	Շան ծոթրին	67
Թրքախոտ կամ մեղրածծուկ	37	Ուռենի	68
Իժախոտ	39	Ուրց	70
Լաստենի	40	Պատկառուկ	71
Լորենի	41	Սեանի	72
Խմին	44	Վիկն	73
Խոնդատ	45	Տատասկափուշ	74
Ծորենի, Զրիկ	46	Ցախի	76
Կաղնի	47	Փամբուղա	53
Կապուկ	49	Փշահաղարջ	77
Կատուաղաղձ	50		

Յ Ա Ն Կ

Ռ Ռ Ւ Ս Ե Ր Է Ն Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր Ի

Ապալիա Բֆայա	16	Լեգոչնիցա	37
» желтая	15	Լիպա	41
Барбарисъ обыкновен.	46	Լոպухъ	53
Береза	50	Լյուբերա	21
Богородская трава	70	Մալինա	62
Богульвикъ	18	Մեդունիցա	37
Валеріана	16	Միմոզա	71
Верескъ	75	Օդուանչիկ	52
Вика	73	Օլխա	40
Горчица	60	Օմեա	59
Гречиха	21	Սուստրնիկ	20
Греческая люцерна	»	Րաբս	26
Дубъ	47	Րաբунցель օբյեկով	17
Дягиль лекарственный	44	Րեվեա	64
Ежевика	63	Տալատ քոլեայ	17
Живучка	58	Տինյակ, եջովիկ	39
Жимолость	18	Տոլկա	56
Земляника	27	Տորոմինա	55
Ива	68	Տուրենցա	54
Иванъ—Чай	19	Տերեն	59
Калина	24	Փաթելի	49
Кленъ	36	Քմբլ	24
Клеверъ	31	Շիկորի	29
Каштанъ	65	Շերնիկա	57
» конскій	66	Շերտոքոլոխ	74
Кипрей или Иванъ—чай	19	Շերեմուխա	72
Коровякъ	45	Շաբդար	65
Кошачья мята	50	Շալֆեյ	28
Крапива	30	Շանդրա	67
Крушина	22	Շեկովիցա	34
Крыжовникъ	77	Շսպարցետ	51
Лещина	33		

3 U V 4

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45 46 47 48 49 50 51 52 53 54 55 56 57 58 59 60 61 62 63 64 65 66 67 68 69 70 71 72 73 74 75 76 77 78 79 80 81 82 83 84 85 86 87 88 89 90 91 92 93 94 95 96 97 98 99 100

Acer platanoides	36
Aesculus Hippocastanum	66
Ajuga reptans	58
Angelica Archangelica	44
Alnus incana	40
Barbarea Vulgaris	54
Berberis vulgaris	46
Betula alba	50
Brassica Napus	26
Calluna vulgaris	76
Caragana arborescens	15
Carduus nutans	74
Castanea vesca	65
Cichorium Intybus	29
Corylus Avellana	33
Echium vulgare	39
Epilobium angustifolium	19
Fragaria vesca	27
Humulus Lupulus	24
Lamium Maculatum	30
Lappa tomentosa	53
Ledum palustre	18
Leontodon Taraxacum	52
Leonurus cardiaca	20
Lonicera Caprifolium	18
Lychnis viscaria	56
Marrubium vulgare	67
Medicago sativa	21

Mimosa pudica	71
Morus alba	34
Nepeta cataria	50
Onobrychis sativa	51
Phacelia congesta	49
Polygonum fagopyrum	21
Prunus spinosa	59
Prunus Padus	72
Pulmonaria officinalis	37
Quercus pedunculata	47
Reseda odorata	64
Rhamnus frangula	22
Bibes Grossularia	77
„ rubrum et nigrum	55
Robinia Pseudoacacia	16
Rubus fruticosus	63
„ Idaeus	62
Salvia officinalis	28
Salix	68
Sinapis alba	60
Thymus serpyllum	70
Tilia	41
Trifolium repens	31
„ resupinatum	65
Trigonella Foeniculum	21
Valeriana officinalis	16
Valerianella olitoria	17
Vaccinium Myrtillus	57
Verbascum phlomoides	45
Viburnum Opulus	24
Vicia sativa	73
Viscum album	59

ՎՐԱՅ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՅԻՆԿՕԳՐԱՓԻԱՆ

Հնդուհում է ՅԻՆԿՕԳՐԱՖԻԱԿԱՆ ամեն տեսակ ԿԼԻՇԷ-
ՆԵՐԻ պատուէրներ, պատրաստում է մարուր, ժամա-
նակին ու մատչելի գներով:

ЦИНКОГРАФИЯ


Грузинскаго Издательскаго О-ва

Принимаетъ всевозможныя Цинкографическія работы;
выполняетъ заказы чисто, аккуратно и въ данный
срокъ.

Цѣны очень доступныя

Հասցեն՝ Тифлисъ, Цинкографія Грузин. Издат. О. ва.

Большая Банкская ул. № 12.



ԾԱԽՈՒՄ ԵՆՔ

Մեր սեփական արհեստանոցում պատրաստած, ամենա-
մատչելի գներով, մնդաբուծական զործիքներ. ցենսրա-
ֆուզ, (մեղրաձան) մոմաբամ, ծխիչ և մեղրի, իւզի, կա-
թի ամաններ, այլ և մեղրաբուծութեան վերաբերեալ ու-
րիշ կարևոր պիտույքներ:

Պատկերազարդ Պրէյս-կուրանտները մեզ գիմողին ուղար-
կում ենք ձրի:

Հասցեն՝ Александрополь, Михайловск. ул. КАРАПЕТУ
КАРАКУЮМЧЯНЦУ.



Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Երես	Էջ	Ախալ	Ուղիղ
9	2	քարաքսերը	քարաքոսերը
11	15	տարաբեր	տարբեր
12	27	խայթելու	խայթել ու
»	36	մեղրացողի	մեղրացողի
16	20	հետզհետ	հետզհետէ
»	6 (ցածից)	փետրձև	փետրաձև
17	8	նեկտարաշարութեամբ	նեկտարաշատութեամբ
18	20 (ցածից)	Ածնի	Անծնի
21	10	» Polygonum	Polygonum
22	9	» Rhamnus	Rhamnus
26	4	» Հացահատիկի	Գոնգեղի
28	6 (ցածից)	կաշուեղէններ	կաշուեղէններ
31	1	» Սրանից	Սրանցից
36	7	» Բղկի	Թղկի
45	2	phlamoides	phlomoides
47	1	pedunculata	pedunculata
»	34	հասակաւորները	հասակաւորները
50	2	բազմազմայ	բազմամայ
59	7 (ցածից)	լկրտինի	լկրտնի
66	3	գործադրում	գործադրում
»	2 (ցածից)	Hippocastanus	Aesculus Hippocastanum
70	15	Serpillum	Serpillum
»	4 (ցածից)	Ուրց	Ուրց, Խոռոց

Անդրկովկասի ամենաընտիր վայրերից մէկում, որը գով-
ուած է իւր բազմատեսակ և նեկտարաշատ ծաղիկներով
և ամենաընտիր մեղրով,

Փ Ա Մ Բ Ա Կ Ի Շ Ր Զ Ա Ն Ի

ՄԵԾ ՂԱՐԱՔԼԻՍՈՒՄ

Ա Ի Ե Տ Ի Ս Ա Ղ Ա Բ Ա Բ Ե Ա Ն Ց Ի

Օրինակելի մեղուարուծարանը իւր կատարելագործու-
թեամբ հռչակ է հանել և վարձատրել է ցուցահանդէս-
ներում մեղախներով և գովասանական մրցանակներով ու
լստ ամենայնի արժանացել է մասնագէտների լուրջ ու-
շադրութեանը:

Ունի պատրաստի փեթակներ և ընդունում է պատուէր-
ներ շրջանակաւոր նոր սխտեմի փեթակների: Ծախում է
խորիսխամեղր (рамочный медъ) և գտած (цетробъж-
ный) մեղր, արհեստական չեչ (искусственная вощина),
մեղուարուծական գործիքներ և ՄԵՂՈՒԱՄԱՅՐԵՐ:

Ամառուայ սեզոնին ընդունում է աշակերտներ:

Դիմել՝ Большой Караклись (Алекс. у. Эр. губ.)
Пчеловоду Аветису М. Агабабянцу.

ի «Գիտություն»-ի խմբագրության մեջ ծանուցում են գիտություն-
տական բովանդակությամբ ձեռնեալ գրքերը

Գինն է

1) Անջուր հողերի ոռոգումն, Գ. Մուրադյան	— 15 Կ.
2) Բանջարաբուծութեան Ձեռնարկ. Կազմեց Ն. Սիմէօնեանց	— 60 »
3) Բամբակը և նրա մշակութիւնը պատկերներով Ա. Աթանասեան	— 40 »
4) Գինեգործութիւն. Կ. Մ. Շահնաղարեանց	1 ր.—
5) Թռչնապահութիւն. Ն. Սիմէօնեանց	— 25 »
6) Թիթենու մշակութիւնը. Ն. Սիմէօնեանց	— 25 »
7) Խոտաբուծութիւն	— 20 »
8) Խաղողի հիւանդութիւնները և բժշկութիւնը Ա. Բաշինջաղեան	— 5 »
9) Կաթնասնտեսութեան ձեռնարկ. Կլէյնի	— 50 »
10) Կօնաքիւի Ս Ձեւիկակի	— 40 »
11) Կօօպերտաիւ աշխարհի պլակատ. րժ. Ա. Բու- դուգեանի	— 10 »
12) Հողի պարարտացումն. Ա. Աթանասեան	— 15 »
13) Մեղրատու բոյսեր. Ն. Սիմէօնեանցի	— 30 »
14) Մեղրաբուծութեան ձեռնարկ. Պօտիխինի	— 75 »
15) Մեղրաբուծութեան ձեռնարկ. Ա. Բարխուդարեանի	— 25 »
16) Ներկատու բոյսեր. Ա. Սարախանեանց	— 25 »
17) Պտղատու ծառերի թշնամիները	— 35 »
18) Վազի մշակութիւնը Կ. Մ. Շահ-ցի	1 ր. — »
19) Տնայնագործական Համագումարը	— 70 »
20) Քէֆիր—Ա. Սարախանեանցի	— 15 »
21) Կաթնատու կովերի ընտրութիւնը և նրանց կերակրելը. Ա. Բալանթար	— 20 »
22) Способы подтема воды. Е. А. Хан-Аговъ	— 70 »



13988